



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՀԱՅԿԱԶ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**ԻՆՉՊԵՍ ԳՐԵԼ**

**ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ**

**Մեթոդական հանձնարարականներ**

**ԵՐԵՎԱՆ**

**ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ**

**2014**

ՀՏԴ 378.147:93/99

ԳՄԴ 74.58+63.3

Հ 854

*Հրատարակվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի  
և ԵՊՀ ուսանողական գիտական ընկերության  
խորհուրդների որոշմամբ*

Հ 854 Հովհաննիսյան Յ. Ժ.

Ինչպես գրել գիտական աշխատանք պատմությունից. Մեթոդական հանձնարարականներ: Եր., ԵՊՀ հրատ. 2014, 64 էջ:

Մեթոդական հանձնարարականները նպատակ ունեն ծանոթացնել պատմության գծով ասպիրանտներին և ուսանողներին՝ գիտական աշխատանք գրելու հմտություններին ու նրբություններին: Ուղեցույցում ներկայացված են ինչպես ատենախոսություն, այնպես էլ դիպլոմային ու կուրսային աշխատանք գրելու կարևորագույն փուլերն ու շարադրման սկզբունքները: Հանձնարարականներն ընդգրկում են գիտական աշխատանք գրելու ողջ ուղին՝ սկսած թեմայի ընտրությունից ու կառուցվածքից, աղբյուրների ու հանձնարարված գրականության մշակումից մինչև բուն պաշտպանական գործընթաց:

ՀՏԴ 378.147:93/99

ԳՄԴ 74.58+63.3

ISBN 978-5-8084-1877-6

© ԵՊՀ հրատարակչություն, 2014

© Յ. Հովհաննիսյան, 2014

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Գիտական աշխատանք գրելու մեթոդական մեր նախորդ ձեռնարկի հրատարակությունից անցել է ավելի քան հինգ տարի:<sup>1</sup> Այդ ընթացքում ոչ միայն ի հայտ են եկել գիտական աշխատանք գրելու նոր համագամանքներ, այլև գիտական բնագավառ են ներթափանցել տեխնոլոգիական նորագույն միջոցներ ու հնարավորություններ: Մյուս կողմից, գիտական աշխատանքի կարևոր արդյունքներից մեկը՝ ատենախոսություն գրելու հետ կապված առանձին նրբությունների ներկայացումը, դուրս էր մնացել մեր ձեռնարկից: Եվ վերջապես, համալսարանական գիտական ընկերության հետ համատեղ աշխատանքի, ինչպես նաև ասպիրանտների ու ուսանողության հետ մեր հանդիպումների արդյունքում անհրաժեշտություն առաջացավ ընդլայնել ձեռնարկի թեմատիկան:

Ճիշտ է, ինտերնետի գիտական ոլորտ հարահոս ներթափանցումը, մի կողմից հեշտացրել է աղբյուրների ու անհրաժեշտ գրականության փնտրումը, սակայն մյուս կողմից, կարծես թե, նվազեցրել է ուսանողության և հետազոտողների հաճախումները գրադարան, ինչն, անշուշտ, անհանգստացնող է: Ուստի, այս հանգամանքը նկատի ունենալով, մենք փորձ ենք արել համատեղելու տեղեկատվական այդ երկու հզոր միջոցների հնարավորությունները գիտական աշխատանքը պատշաճին ներկայացնելու համար:

Գիտական աշխատանքներն, անշուշտ, ուսումնական աշխատանքի կարևոր և բաղկացուցիչ մասն են կազմում: Այդ աշխատանքների կազմակերպումը ամենից առաջ նպատակ ունի խորացնել հետազոտողների և ուսանողների գիտելիքներն ընտրած մասնագիտության բնագավառում, ինչպես նաև ծանոթացնել գիտական ուսումնասիրության եղանակներին ու նրբություններին:

Պատմության ֆակուլտետն ավարտող ուսանողը պետք է ունենա ոչ միայն գիտելիքների որոշակի պաշար, այլև տիրապետի գիտական աշ-

---

<sup>1</sup> Տես՝ Գ. Գոլիանինյան, Ինչպես գրել դիպլոմային և կուրսային աշխատանք պատմությունից, Երևան, Եր., համալս., հրատ., 2007, 42 էջ:

խատանքի մեթոդիկային: Կուրսային և դիպլոմային աշխատանքներում առաջին անգամ ուսանողը դրսևորում է ինքնուրույն գիտական աշխատանք գրելու ունակություններ, հմտանում է թեմայի ընտրության, աղբյուրների և գրականության հետ արդյունավետ աշխատելու, հանձնարարված նյութը վերլուծելու և իր մտքերը հստակ շարադրելու խնդրում: Այլ խոսքով, դրանք ուսանողի առաջին փորձերն են գիտական ասպարեզում, ուստի այստեղ հարկավոր է առավել հետևողականություն և աշխատասիրություն:

Գիտական աշխատանքը ենթադրում է ազատ ստեղծագործականություն և հեղինակի մտքերի անկաշկանդ շարադրանք: Այս իմաստով, ներկա հանարարականներն այն նվազագույն պահանջներն են, որոնք պետք է հաշվի առնել գիտական աշխատանք կատարելիս: Ինչպես ցույց են տալիս դիպլոմային և կուրսային աշխատանքների վերջին տարիների պաշտպանությունները, ուսանողները հաճախ դժվարությունների են հանդիպում հանձնարարված գրականությունը և ձեռքի տակ եղած նյութերն ու փաստաթղթերը մշակելու խնդրում: Ուստի, այդ անհրաժեշտությունը ևս մեզ թելադրեց ձեռնարկելու այս գործը. մեթոդական օգնություն ցույց տալ պատմության ֆակուլտետների ուսանողներին՝ կուրսային և դիպլոմային աշխատանքների<sup>2</sup> նախապատրաստական և դրան հաջորդող փուլերը հաջողությամբ հաղթահարելու խնդրում:

Միևնույն ժամանակ, թեկնածուական ատենախոսությունների պատրաստման ներկա ընթացքը ևս մեզ խնդիր առաջադրեց ձեռնարկում անդրադառնալ նաև այս հարցին: Համոզված ենք, որ ձեռնարկը օգտակար կլինի ատենախոսությունների նախապատրաստական փուլում ծագած շատ խնդիրներ ժամանակին լուծելու համար: Համենայն դեպս, ներկա ձեռնարկում մենք մեր առջև հենց այսպիսի խնդիր ենք դրել:

Այսպես ուրեմն... Ձեզ հանձնարարված է գրել գիտական աշխատանք...

---

<sup>2</sup> Դիպլոմային աշխատանքի տակ այսուհետ պետք է նկատի ունենալ ինչպես բակավավրիատի ավարտական աշխատանքը, այնպես էլ մագիստրոսական թեզը:

## ԹԵՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Գիտական յուրաքանչյուր աշխատանքի հաջողությունը պայմանավորված է ոչ միայն հետազոտողի կամ ուսանողի տեսական պատրաստվածությամբ, այլև շատ բան կախված է թեմայի ճիշտ ընտրությունից: Ուստի, գիտական աշխատանքի նախապատրաստության այս փուլին պետք է լրջորեն վերաբերվել: Հետազոտողների պարագայում խնդիրը փոքր-ինչ դժվար է. ատենախոսության թեմայի ընտրությունը մեծապես պայմանավորված է ապագա գիտական ղեկավարի նախասիրություններից, ինչը միանգամայն ընդունելի է. թեման պետք է բավականին ծանոթ լինի գիտական ղեկավարին:

Ուսանողների պարագայում խնդիրը կանոնակարգված է. նրանք դիպլոմային և կուրսային աշխատանքի թեմաներ են ընտրում ամբիոնների կողմից կազմած առանձին ցուցակներից: Այստեղ արդեն թեմայի ընտրության խնդրում հաճախ վճռական դեր է խաղում ուսանողների նախասիրությունը. առաջնություն չտալով որևէ թեմայի, նրանք ուղղակի հրապուրվում են թեմաներից մեկով և այդպիսով կատարում են իրենց ընտրությունը: Երբեմն նաև, ուսանողներն ուղղակի ցանկություն են հայտնում ընդարձակել կամ շարունակել իրենց կուրսային աշխատանքի թեման՝ դարձնելով այն դիպլոմային աշխատանքի թեմա:

Իհարկե, կարելի է դիպլոմային աշխատանքի թեման կապել կուրսային աշխատանքի հետ, սակայն այստեղ հարկավոր է հաշվի առնել մեկ պարտադիր պայման. անպայմանորեն պետք է ընդարձակել թեմայի ժամանակագրական շրջանակները և խորացնել քննարկվող հիմնահարցերը: Այլ խոսքով՝ դիպլոմային աշխատանքի թեման կուրսային աշխատանքի պարզ վերարտադրությունը չպետք է լինի: Մյուս կողմից սակայն, ընդունելի չէ մի քանի տարողունակ հիմնահարցեր ընդգրկել թեմայի մեջ, կամ, ընդհակառակը, արհեստականորեն դուրս մղել տվյալ հիմնահարցի ուսումնասիրության համար կարևորություն ներկայացնող հարցերը:

Թեմայի ընտրության ժամանակ պետք է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքին, թե որքանով է այն լուսաբանված պատմագիտական գրականության մեջ: Հարուստ գրականության առկայությունը

սովորաբար վկայում է պատմաբանների կողմից թեմայի ուշադրության արժանանալու մասին և այս իմաստով հեշտանում է ուսանողի գործը հիմնահարցի ընտրության և կողմնորոշման խնդրում: Այս դեպքում, սակայն, ուսանողի մոտ որոշակի դժվարություններ են առաջանում այն առումով, որ գրեթե բացառվում է ինչ-որ նորություն ասելու հնարավորությունը: Բազմակողմանի ուսումնասիրված թեմայի մեջ, բնականաբար դժվար է տեսնել ուսանողի այսպես ասած, ապագա քննությունը: Սյուս կողմից, թույլ կամ քիչ ուսումնասիրված թեմայի առկայությունը ամենևին էլ չի խոսում այն մասին, թե վերջինիս ուսումնասիրությունը կարևոր չէ: Ուսանողներից ոմանք էլ ցանկություն են հայտնում ընտրել համեմատաբար հեշտ գրվող թեմաներ: Ամեն դեպքում, ընտրությունը Ձերն է և հարկավոր է այս նկատառումները հանգիստ կշռադատել:

Ուստի, որպես մեթոդական օգնություն, կարող ենք առաջարկել գիտական աշխատանքի թեմայի ընտրության մի քանի կարևոր պայմաններ.

**Առաջին.** ընտրած թեման, անպայման իր մեջ պետք է պարունակի հետազոտությանը բնորոշ որակ, ինչ-որ **նորույթ**, որն արժանի է ուսումնասիրության: Այլ խոսքով, գիտական աշխատանքն աղբյուրների և գրականության վերապատմում չէ, այլ ինքնուրույն աշխատանք, որի մեջ պետք է լինի նորության տարրը: «Նորություն» ասելով առաջին հերթին պետք է հասկանալ գոնե ինչ-որ նորահայտ փաստերի շարադրում և նոր աղբյուրի հայտնագործում, կամ էլ, ասենք, դեռևս անհայտ փաստի կամ թեկուզ արդեն հայտնի հիմնահարցի մի նոր կողմի մեկնաբանություն: Այս իմաստով, պետք է խուսափել պատմագիտության մեջ արդեն «ծեծված» թեմաներից և ընտրել այնպիսի թեմա, որը հոգեհարազատ լինելուց բացի, կարելի կլինի ներդնել սեփական մեկնաբանություններ՝ «հայտնագործելու» Ձեզ համար անհայտ մնացած ինչ-որ հիմնահարց:

**Երկրորդ.** ընտրելով գիտական աշխատանքի թեման, ամենից առաջ պետք է պարզեք նրա աղբյուրագիտական հարուստ հենքը (բազան), որը ենթադրում է մի քանի կարևոր տարրերի՝ արխիվային վավերագրերի, փաստական նյութերի, մամուլի, հետազոտական գրակա-

նության առկայություն, որպեսզի ցանկության դեպքում Դուք կարողանաք օգտվել դրանցից:

**Երրորդ.** ընտրված թեման հնարավորության սահմաններում պետք է ունենա գիտական և պրակտիկ նշանակություն:

**Չորրորդ.** գիտական աշխատանքի թեմայի ընտրության կարևորագույն չափանիշներից մեկն էլ նրա արդիականությունն է՝ կապը ներկայիս հասարակական-քաղաքական խնդիրների և պատմագիտական հետաքրքրությունների հետ:

Իհարկե, իրականում թեմայի ընտրությունն այնքան էլ հեշտ գործ չէ, սակայն ընտրված թեման պետք է կրի Ձեր մտքի և հետագա աշխատանքի կնիքը: Այլ խոսքով, ընտրված թեման պետք է իր մեջ խնդիր պարունակի և որոշակի պատմագիտական հետաքրքրություն ներկայացնի:

Պատմագիտական աշխատանքների թեմատիկան այնքան բազմազան է, որ բավականին հեշտացնում է ուսանողի ընտրության հնարավորությունը: Մյուս կողմից, պատմագիտական յուրաքանչյուր թեմա կարելի է լուսաբանել ամենատարբեր տեսանկյուններից. ուսումնասիրության նյութ կարող են դառնալ ինչպես ընդարձակ թեմաները, որոնք գլխավորապես պահանջում են ընդհանրական եզրակացություններ, այնպես էլ նեղ թեմաները, որոնց լուսաբանումը ենթադրում է խորքային ուսումնասիրություն:

Ուստի, ընտրելով Ձեր, ասենք, մոտավոր թեման, Դուք պետք է հստակ պատկերացնեք, թե որն է լինելու ապագա հետազոտության ժամանակագրական սահմանները, այսինքն՝ որ շրջանից եք գրելու՝ հին, միջին, թե՛ նոր և նորագույն: Ընտրելով նույնիսկ այս ժամանակաշրջաններից որևէ մեկը, Դուք չեք կարող Ձեր գործն ավարտած համարել. հարկավոր է նաև հստակ կողմնորոշվել, թե նշված ժամանակաշրջաններից հատկապես, ո՞ր հատվածն եք պատրաստվում ուսումնասիրելու՝ դարի սկիզբը, կեսերը, թե ասենք վերջին քառորդը և հաջորդ դարի սկիզբը միասին և այլն: Ընդ որում, չի կարելի պատահական ժամանակահատված ընտրել. այն պետք է հիմնավորված լինի և որ կարևոր է՝ ընդունված լինի պատմագիտական շրջանակներում:



Կարևոր է նաև, որ թե՛ հետազոտողը և թե՛ ուսանողը թեմայի ընտրությանը մոտենա ստեղծագործականորեն և կատարի իր հետաքրքրություններին և տեսական պատրաստությանը համապատասխան ընտրություն: Դուք պետք է պարզեք նաև, թե պատմագիտական որ բնագավառն է հատկապես Ձեզ հետաքրքրում՝ քաղաքական, սոցիալ-տնտեսական, թե մշակութային ուղղվածության թեմաները: Որպես կանոն, քաղաքական և սոցիալ-տնտեսական ուղղվածության թեմաները հետազոտողից պահանջում են քաղաքական և սոցիալ-տնտեսական գործընթացների գերազանց իմացություն, ներկայացված վիճակագրական տվյալները հետախուզելու և «խոսեցնելու» հմտություն: Իհարկե, պակաս կարևոր չեն նաև մշակութային ուղղվածության թեմաները, ինչը ուսումնասիրողից պահանջում է լայն մտահորիզոն և պատրաստվածություն: այդպիսի թեմա ընտրողը գոնե պետք է քաջատեղյակ լինի տվյալ ժամանակաշրջանի մշակութային իրավիճակին և գլխավոր ուղղություններին:

Վերջում՝ մեկ խորհուրդ ևս. այն առավելապես վերաբերում է ուսանողներին. կուրսային և դիպլոմային աշխատանքների թեմաների ընտրության լավագույն ժամանակը պաշտպանություններին նախորդող քննաշրջաններն են, իսկ ավելի կոնկրետ՝ ամառային քննաշրջանի ավարտը: Հետաձգել այդ ժամանակը, ինչին հաճախ են դիմում մեր ուսանողները, ընդունելի և ցանկալի չէ, քանի որ կսպառվեն «լավագույն» թեմաները և հետո կարելի է ընդհանրապես զրկվել այդ իրավունքից: Մեկ անգամ ևս ցանկանում ենք ընդգծել, որ գիտական աշխատանքի թեմայի ճիշտ ընտրությունից է կախված Ձեր հետազոտության հաջողությունը և Ձեր հետագա պրպտումները գիտության ասպարեզում: Գաղտնիք չէ, որ դիպլոմային շատ աշխատանքներ հետագայում դարձել են գիտական հատուկ հետազոտության և ատենախոսությունների թեմաներ:

## ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Դիպլոմային կամ կուրսային աշխատանք գրելու համար ուսանողը նախ ներկայացնում է համապատասխան դիմում՝ լրացված ամբիոնի վարիչի անունով: Ընդ որում, դիմումում ուսանողը, անպայման պետք է նշի իր ապագա աշխատանքի թեման, ինչպես նաև՝ ժամանակագրական հստակ սահմանները: Այնուհետև թեման հաստատվում է համապատասխան ամբիոնի նիստում: Նույն նիստում նշանակվում է նաև աշխատանքը ղեկավարող դասախոսը: Ընդ որում, հնարավոր է, որ ամբիոնի կողմից քննարկման ժամանակ թեմայի մեջ ձգարտումներ մտցրվեն, կամ էլ՝ ամբիոնի կողմից այն հավանության չարժանանա և առաջարկվի նոր, ընտրած ժամանակաշրջանին և հիմնահարցին մոտ մեկ այլ թեմա: Ամբիոնի կողմից թեմայի հաստատումը համարվում է վերջնական: Հետագա փոփոխությունները հնարավոր է միայն գիտական ղեկավարի և ամբիոնի վարիչի համաձայնությամբ:

Ուսանողի կողմից թեմայի կամայական փոփոխություն չի թույլատրվում: Ուստի, այս ամենից խուսափելու համար, խորհուրդ է տրվում նախապես, աշխատանքի ապագա ղեկավարի հետ միասին մեկ անգամ ևս համաձայնության գալ թեմայի հարցում և նոր միայն այն մտցնել ամբիոնի նիստի քննարկման: Ամեն դեպքում, կուրսային և հատկապես դիպլոմային աշխատանքների թեմաները հաստատվում են ամբիոնի կողմից՝ համապատասխան քննարկումից հետո: Ասպիրանտների և մյուս հետազոտողների համար խնդիրը խիստ կանոնակարգված է. գիտական ղեկավարի հետ թեմայի ընտրության հարցում նախնական համաձայնությունից հետո այն ներկայացվում է տվյալ ամբիոնի (գիտական հաստատության համար՝ բաժնի) նիստի քննարկմանը:

Պետք է նկատել, որ թեմայի հաստատումը հաճախ ընթանում է բուռն քննարկումների մթնոլորտում և նույնիսկ կարող է պատահել, որ ներկայացվող թեման չհաստատվի. ի վերջո, այդ ամենն արվում է ինչպես ասում են՝ ելնելով դիսերտանտի շահերից՝ հետագայում խնդիրների առջև չկանգնելու համար:

Ճիշտ է, այստեղ կարևոր դեր են խաղում գիտական ղեկավարի բացատրությունները, սակայն, հետազոտողը և իր ղեկավարը կարող են տեղեկացված չլինել, որ առաջարկվող թեման արդեն գրվել է, կամ՝ գտնվում է նախապաշտպանական փուլում, կամ, ասենք՝ թեման մեկ այլ գիտական խորհրդի կողմից արդեն հաստատվել է: Համենայն դեպս, այսպիսի դեպքերը գիտական պրակտիկայում հազվադեպ երևույթ չեն: Ուստի, թեման ամբիոնի (բաժնի) նիստի քննարկմանը ներկայացումից առաջ հետազոտողն ինքը սեփական նախաձեռնությամբ պետք է հետևողական լինի և հարցում կատարի համապատասխան հաստատություններ, պարզելու, թե արդյո՞ք իր ընտրած թեման որևէ այլ հետազոտողի կողմից «վերցված» չէ: Եվ այդ ամենը պարզելուց հետո միայն, նա պետք է դիմի ամբիոնին կամ բաժնին՝ թեման հաստատելու խնդրանքով: Ամբիոնի (բաժնի) կողմից թեմայի հավանության արժանանալը սակայն, դեռևս գործընթացի վերջնական փուլը չէ. այն պետք է իր վերջնական հաստատումը ստանա ֆակուլտետի (ինստիտուտի) գիտական խորհրդում: Հարցը նախապատրաստում է գիտական քարտուղարը և ներկայացնում է խորհրդի քննարկմանը և վերջինիս հավանությանն արժանանալուց հետո միայն ընտրված թեման կարող էք համարել Ձերը: Ի դեպ, նույն գիտական քարտուղարից պետք է պահանջել թեմայի հաստատման մասին խորհրդի քաղվածքը, որը հետագայում կարիք կլինի ներկայացնել արդեն բուն պաշտպանության ժամանակ:

Գիտական պրակտիկայում քիչ չեն նաև դեպքերը, երբ թեման հաստատելուց հետո, ատենախոսության բուն պատրաստման գործընթացում հարկ է լինում կրկին դիմել գիտական խորհրդին՝ ատենախոսության թեմայի մեջ ժամանակագրական կամ բովանդակային մասնակի փոփոխություններ կատարելու խնդրանքով: Կրկնում ենք, թույլատրվում է կատարել միայն ժամանակագրական կամ բովանդակային մասնակի շտկումներ, քանի որ բուն թեմայի արմատական (բովանդակային) փոփոխության Ձեր խնդրանքը ուղղակի կմերժվի և Դուք ստիպված կլինեք կրկին անցնել թեմայի հաստատման նույն գործընթացնե-

րը, այն էլ՝ միայն նոր թեմա ներկայացնելու պայմանով: Մեր հորդորը Ձեզ՝ նմանատիպ դեպքերից ուղղակի հարկավոր է խուսափել, քանի որ, նախ՝ գիտական խորհրդի կողմից Ձեր խնդրանքը լուրջ չի ընդունվի և, ընդհանրապես, կասկածի տակ կդրվեն գիտական աշխատանք կատարելու Ձեր մասնագիտական կարողությունները:

Վերջում ցանկանում ենք մեջբերել նաև ատենախոսությանը վերաբերող ի քանի կարևոր կանոնադրական դրույթներ.

➤ Գիտական աստիճանի կարող են հավակնել այն անձինք, ովքեր ունեն բարձրագույն կրթություն (եռաստիճան բարձրագույն կրթական համակարգում՝ մագիստրոսի որակավորում) և հանձնել են որակավորման քննություններ:

➤ Ատենախոսությունը հեղինակի գիտական հետազոտությունների հիման վրա կազմած աշխատություն է, որը ներկայացվում է գիտական աստիճանի հայցման համար:

➤ Թեկնածուի գիտական աստիճանի (առաջին գիտական աստիճան) հայցման համար ներկայացված ատենախոսությունը կարող է գնահատվել իբրև գիտության տվյալ բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում կամ նոր խնդրի առաջադրում:

➤ Ատենախոսության թեման հաստատում է համապատասխան մասնագիտական հիմնարկը՝ ԲՈՅ-ի սահմանած կարգի համաձայն. թեմա հաստատելու համար մասնագիտական հիմնարկը պետք է դիմի Բարձրագույն որակավորման հանձնաժողով՝ տվյալ մասնագիտությամբ առնվազն գիտությունների մեկ դոկտոր և գիտությունների երկու թեկնածու հաստիքային աշխատողների առկայության պայմաններում:

➤ Թեկնածուական ատենախոսությունների պաշտպանության համար անհրաժեշտ է առնվազն երեք գիտական հոդված, որոնցից միայն մեկը կարող է լինել համահեղինակով:

➤ Գիտական խորհուրդը հաստատում է ատենախոսության գիտական ղեկավար թեկնածուական ատենախոսության համար: Գիտական ղեկավարի համաձայնությունը պարտադիր է: Գիտական ղեկավար կարող են նշանակվել տվյալ բնագավառի գիտության դոկտորները,

ինչպես նաև թեկնածուները, ովքեր ստացել են ԲՈՅ-ի համաձայնությունն ատենախոսության ղեկավար լինելու համար:

➤ Ատենախոսության թեմայի հաստատման որոշման մեջ նշվում են թեմայի անվանումը, գիտության բնագավառը, մասնագիտությունը (ըստ աստիճանաշնորհման անվանացանկի) և հայցորդի ղեկավարը:

➤ Պատմական գիտությունների համար սահմանված են հետևյալ թվանիշները և անվանացանկը.

Է.00.01 – Հայոց պատմություն

Է.00.02 – Համաշխարհային պատմություն

Է.00.03 – Հնագիտություն

Է.00.04 – Ազգագրություն (ազգաբանություն)

Է.00.05 – Պատմագրություն, աղբյուրագիտություն

## **ՀԱՆՁՆԱՐԱՐՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ**

### **ՀԱՎԱՔՈՒՄԸ**

Գիտական աշխատանքի կարևոր փուլերից մեկը թեմայի վերաբերյալ գրականության և համապատասխան նյութերի (աղբյուրների) հավաքումն է: Կարծում են, թե որտեղ փնտրել պահանջվող գրքերը, հետազոտողները քաջատեղյակ են. բնականաբար, քայլերը պետք է ուղղել գրադարան և արխիվ: Կարծում ենք, ավելորդ չէ հիշեցնել, որ գրադարանում հետազոտություն սկսելուց առաջ պետք է գրանցվել, իսկ արխիվում աշխատելուց առաջ պետք է թույլտվություն ստանալ:

Այն բանից հետո, երբ կդառնաք գրադարանի լիարժեք ընթերցող և կունենաք արխիվում աշխատելու թույլտվություն, հենց սկզբից, առանց կաշկանդվելու մոտեցեք գրադարանավարին կամ արխիվապահին՝ խնդրելով օգնելու Ձեզ՝ անհրաժեշտ նյութի որոնման հարցում: Բացի դրանից, այժմ արդեն բոլոր գրադարաններում ու արխիվներում կան ժամանակագրական կամ արխիվային ուղեցույցներ: Դրանք լինում են՝

առարկայական, թեմատիկ ու այբբենական և գոյություն ունեն ինչպես քարտարանների տեսքով, այնպես էլ էլեկտրոնային տարբերակով:

**Քարտարանը** կազմվում է առանձին թերթիկներից, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է գրքի կամ ժողովածուի նկարագրությունը (հեղինակի ազգանունը, ստույգ անվանումը, հրատարակության վայրը, հրատարակչության անվանումը, հրատարակման տարեթիվը): Փնտրել պետք է հետևյալ եղանակով. եթե գիտեք գրքի հեղինակին, ապա այն փնտրեք այբբենական քարտարանում, հեղինակի ազգանվան տառերով: Եթե գիրքն ունի մի քանի հեղինակներ, ապա պետք է փնտրել առաջինը նշված հեղինակի ազգանունով: Իսկ եթե Ձեզ հայտնի է վերնագիրը և գիրքն ունի մի քանի հեղինակներ, ապա կարող եք փնտրել նաև գրքի վերնագրով, բնականաբար առաջին բառի համապատասխան տառից: Ժողովածուի պարագայում փնտրումը պետք է սկսել վերնագրի սկզբնատառերից:

Սակայն ինչպես վարվել, երբ ձեռքի տակ ունենալով թեման, չգիտեք թե, որ գրքերը պատվիրել: Թեպետ այս հարցում Ձեզ առաջինը կօգնի գիտական ղեկավարը, սակայն, ինչպես արդեն նշեցինք, գրադարանում Ձեր տրամադրության տակ կլինեն **թեմատիկ քարտարանները**, որոնցում գրքերը տեղավորված են ըստ ժամանակաշրջանների և թեմաների: Գտնելով Ձեր թեման, Դուք կարող եք դուրս գրել պահանջվող գրականությունը: Ասենք օրինակ, Ձեր թեման վերաբերում է հայոց պատմության հին, միջին, նոր կամ նորագույն շրջանի պատմությանը, կամ ասենք՝ Հայրենական Մեծ պատերազմի թեմային (1941-1945 թթ.): Դուք պետք է քարտարանից դուրս բերեք Ձեր թեմային համապատասխանող արկղը, մեկ առ մեկ ընթերցեք նրանում տեղադրված գրքերի քարտերը և դուրս գրեք վերջիններիս մատենագիտական տվյալները: Այդ տվյալները հետո կամ նույնիսկ տեղում կարող եք անցկացնել պատվերի թերթիկում: Պատվեր ընդունող աշխատակիցը տեղում կասի, թե որ ժամին պատրաստ կլինի Ձեր պատվերը: Ձեզ մնում է նշանակված ժամին լինել ընթերցասրահում՝ պատվիրված գիրքը ստանալու համար:

Ձեզ անհրաժեշտ *հողվածները* պետք է փնտրել պարբերականների, կամ ինչպես ընդունված է ասել՝ **մամուլի քարտարանից**, որոնք մյուս քարտարաններից առանձնացված են: Այդ քարտարաններից օգտվելու սկզբունքները նույն են, ինչ-որ գրքի պարագայում է:

**Արխիվային նյութերի** որոնումը փոքր-ինչ այլ կերպ է կատարվում. արխիվապահը սկզբից Ձեզ կհանձնի թեմատիկ ուղեցույցը՝ այսպես կոչված համապատասխան ֆոնդերի ցուցակները, որի մեջ Դուք պետք է գտնեք Ձեզ հետաքրքրող արխիվային նյութը: Այդ տվյալները Դուք պետք է կրկին գրանցել պատվերի թերթիկում՝ գործը ընթերցասարահում ստանալու համար: Այստեղ ևս հնարավոր է, որ պահանջված գործը միանգամից Ձեզ չբերեն. մի մոռացեք, որ գործի փնտրումը ժամանակ է պահանջում: Հարկավոր է պայմանավորվել արխիվապահի հետ և նշանակված ժամին ներկայանալ արխիվ:

Վերջին տարիներին գրադարաններում և արխիվներում գոյություն ունեն նաև **էլեկտրոնային քարտարաններ**: Դրանք ստեղծվել են հետազոտողներին անհրաժեշտ տեղեկատվություն և գրքերի ու արխիվային նյութերի որոնումը արագ ապահովելու նպատակով: Ավելին, էլեկտրոնային քարտարանները հնարավորություն են տալիս ինտերնետի միջոցով որոնում կազմակերպել նաև արտասահմանում: Էլեկտրոնային միջոցներով որոնումը բավականին հեշտ գործընթաց է. բավական է գրել հեղինակի անուն-ազգանունը և համակարգչի էկրանին կհայտնվի տվյալ հեղինակի գրքերը՝ մատենագիտական բոլոր տվյալներով հանդերձ:

Առաջին կարևոր խորհուրդը Ձեզ. հարկավոր է հավաքել թեմային վերաբերող ողջ պատմագիտական գրականությունը՝ լինի դա հատուկ ուսումնասիրություն, հողված, նոթեր և այլն: Հարկավոր է գիտենալ նաև, որ Ձեզ անհրաժեշտ նյութը կարող է լինել ոչ միայն այն աշխատություններում, որոնք անմիջական նվիրված են Ձեր թեմայի լուսաբանությանը, այլև նրանցում, որտեղ թեմային վերաբերող հպանցիկ անդրադարձներ կան: Հետազոտողը պետք է աշխատի հավաքել բոլոր այն փաստերը, որոնք թեկուզ փոքր առնչություն ունեն իր ընտրած թեմայի

հետ: Դա պարտադիր պայման է հետագայում ձիշտ հետևություններ անելու համար:

Թեմային վերաբերող գրականության ցանկը կազմելուց հետո, Դուք պետք է այն ներկայացնեք Ձեր գիտական ղեկավարին և ձգարտումներից ու ավելացումներից հետո միայն կազմեք գրականության և աղբյուրների վերջնական ցանկը: Հարկավոր է նաև մշտապես հետևել պատմագիտական նորություններին և հրապարակվող հոդվածներին: Որպես կանոն, պատմաբաններն իրենց աշխատությունների համար անհրաժեշտ տեղեկատվությունը հավաքում են բազմաբնույթ աղբյուրներից:

***Աղբյուրների վրա աշխատանքը*** պատմական հետազոտման գործընթացի թերևս ամենից կարևոր փուլն է: Եվ որքան ավելի շատ աղբյուրներ օգտագործվի և մշակվի հետազոտության արդյունքում, այնքան ավելի ամուր կլինի գիտական աշխատանքի աղբյուրագիտական հիմքը, ինչը կարևոր նախապայման է առաջադրված խնդիրները հաջողությամբ լուծելու համար:

Անշուշտ, աղբյուրների որոնումը և դրանց բազմազանությունը դեռևս չի նշանակում պատմական հետազոտության կայացում: Առաջին հայացքից, պատմական աղբյուրը անցյալի ստույգ բնորոշումն է: Սակայն աղբյուրներին պետք է վերաբերվել զգուշավորությամբ և այստեղ կարևոր չէ, թե այն ինչ տեսակի աղբյուր է՝ գրավոր, թե բանավոր: Կամ թե ականա, հետազոտողը իր ուսումնասիրության ժամանակ, բավականին հաճախ հանդիպում է նաև իրարամերժ և միմյանց հակասող տեղեկությունների: Այսօր նույնիսկ մենք հաճախ չենք գիտակցում, որ հետագայի համար գրավոր աղբյուր ենք ստեղծում, երբ օրագիր, կամ ասենք՝ տեղեկագիր ու ինքնակենսագրական տվյալներ ենք լրացնում, նույնիսկ՝ երբ նամակներ ենք գրում: Ավելին, պետական հիմնարկներում կազմվում են բազմաթիվ գրավոր փաստաթղթեր. դրանք խորհրդարանի նիստերի սղագրություններ են, դատական որոշումներ, վավերացված բազմապիսի պայմանագրեր, որոնց մի մասն, անկասկած, ապագայում պատմական աղբյուրների կվերածվեն:



Ասվածի մեջ համոզվելու համար բավական է վերցնել ձեռքի տակ եղած ցանկացած հետազոտություն և ծանոթանալ աշխատության վերջում տրված մատենագիտությանը. Դուք այնտեղ կտեսնեք աղբյուրների բազմազանություն և բազմակիություն, ինչը գիտական աշխատանքի համար միանգամայն ընդունելի ու բնական է: Այս ամենով հանդերձ սակայն, գիտական աշխատանքի համար պետք է նկատի ունենալ մեկ պարտադիր և կարևոր պայման. դա օգտագործած **աղբյուրների տեսակավորումն ու համակարգումն** է:

Այլ խոսքով՝ գրավոր աղբյուրները հարկավոր է բաժանել **պաշտոնական** աղբյուրների (դրանք օրենսդիր, կառավարության, դատական ատյանների, պետական հիմնարկների հրամանագրեր, կարգադրություններ, զեկուցագրեր և որոշումներ են) և **ոչ պաշտոնական** աղբյուրների, որոնք իրենց մեջ ներառում են անձնական բնույթի փաստաթղթերը՝ նամակներ, օրագրեր, կենսագրական տեղեկություններ, հուշագրություններ և այլն: Ոչ պաշտոնական բնույթի աղբյուր է համարվում նաև ժամանակի մամուլը, զանազան բնույթի հայտարարությունները և այլն: Անկասկած, գրավոր աղբյուրների թվին է դասվում նաև գիտական և գեղարվեստական գրականությունը:

Ասվածն առավել պատկերավոր դարձնելու համար բերենք երկու բնորոշ օրինակներ.

**Առաջինը՝** հատված է Սան-Ստեֆանոյում 1878թ. փետրվարին կնքված պայմանագրից, որն, անշուշտ, պաշտոնական փաստաթուղթ է. «Յոդված 16: Նկատի ունենալով, որ ռուսական զորքերի դուրսբերումը նրանց կողմից գրավված Յայաստանի՝ Թուրքիային վերադարձվելիք վայրերից կարող է այնտեղ առիթ տալ բախումների ու բարդությունների, որոնք երկու պետությունների բարի հարաբերությունների վրա կունենան վնասակար ազդեցություն, Բարձր Դուռը պարտավորվում է անհապաղ իրագործել հայաբնակ մարզերի տեղական կարիքներից բխող

բարեփոխումներ և բարենորոգումներ և զերծ պահել հայերի անվտանգությունը քրդերից և չերքեզներից»<sup>3</sup>:

**Երկրորդը՝** մեջբերում է նույն պատերազմին մասնակցած ռուս մի սպայի օրագրից, որն, իհարկե, դասվում է ոչ պաշտոնական փաստաթղթերի շարքին. «Չայկական այս քաղաքի (խոսքը տվյալ դեպքում Շիրակավանի մասին է՝ Յ.Յ.) ավերակներից կարելի էր կռահել, որ ժամանակին այն մեծ քաղաք է եղել. ասում են, որ հասակակից է Անիին և նույնիսկ ավելի հին է: Այժմ նրանից մնացել է միայն կիսավեր եկեղեցին: Նրանում քաղաքակրթության կնիքն է, թեպետ հստակ երևում է նաև վանդալիզմի և ֆանատիզմի հետքերը... Ի՞նչ է մնացել հայոց այս հինավուրց մայրաքաղաքից, որն, ինչպես պատմում են այստեղ, ունեցել է քառասուն վերստ շրջագիծ: Եվ որքան վեհաշուք է այս եկեղեցին, նույնիսկ իր ավերակ վիճակով... Թիֆլիսում նույնիսկ ես այսպիսի եկեղեցի չեմ տեսել: Թեև գմբեթն ավերված է, սակայն պատերը և ներսի սյուները դեռևս կանգուն են: ...Ներսում փորագրված հայկական արձանագրություններ են, որոնք բավականին լավ են պահպանված: Մեզ ուղեկցող հայ Բաբկենի հետ երկար տանջվեցինք, ինչոր կերպ հասկանալու համար դրանցից մեկի իմաստը»<sup>4</sup>:

Գրավոր աղբյուրներն իրենց հերթին բաժանվում են երկու խմբի՝ առաջնային և երկրորդային:

- **Առաջնային աղբյուրն** այն է, որը ստեղծվել է հենց այն դարաշրջանում, որը Դուք պատրաստվում եք քննության անել Ձեր աշխատանքում:

- **Երկրորդային աղբյուրներն** ուսումնասիրվող դարաշրջանից հետո ստեղծված և, բնականաբար, արդեն վերամշակման ենթարկված աղբյուրներն են:

Գիտական աշխատանքի կարևոր փուլերից մեկը հավաքված **աղբյուրների ստուգաբանությունն** է, կամ ինչպես ասում են՝ աղբյուրի

---

<sup>3</sup> Ств` Сборник договоров России с другими государствами. 1856-1917. М., 1952, с.159-175.

<sup>4</sup> "Военный сборник" 1860, кн. 5, с.154-155.

հավաստիության մեջ համոզվելը: Պատմաբանի պարտքն է ստուգել փաստաթղթի իրական կամ կեղծված լինելու հանգամանքը: Տարիների գիտական վաստակ ունեցող պատմաբանի համար այն առանձնակի դժվարություն չի ներկայացնում. գիտական հոտառությունն ու կուտակած հարուստ փորձը կօգնեն նրան արագորեն լուծելու խնդիրը: Խնդիրը թերևս դժվարություն կարող է ներկայացնել սկսնակ և դեռևս փորձառություն չունեցող հետազոտողի համար, ուստի իրավիճակից դուրս գալու գլխավոր նախապայմանը աղբյուրի համակողմանի քննությունն է ու ժամանակաշրջանի գերազանց իմացությունը:

Խնդիրն առավել քան դժվարանում է աղբյուրագիտական բնույթի հարցերի քննության ժամանակ. երբ գրեթե անընկալելի է դառնում ժամանակի պատմիչի կողմից օգտագործած առանձին բառերի և արտահայտությունների իմաստը և, հատկապես, այն իմաստը, որը նկատի է ունեցել տվյալ պատմիչը: Սակայն այս հանգամանքը նույնիսկ միակ դժվարությունը չէ. հայտնի է, որ առանձին պատմիչների բնագրերի բացակայության պատճառով ստեղծվել են մի քանի վերաշարադրված տարբերակներ, որոնց, առանձին հատվածներ մեղմ ասած՝ չեն համապատասխանում բնագրին:

Չետևաբար, հնարավոր է, որ լինեն բնագրի տարբեր ընթերցումներ: Բացի դրանից, աղբյուրի ստույգ լինելու, կամ ինչպես ընդունված է ասել՝ հավաստիության փաստը ստուգելու համար պատմաբանը պետք է լավատեղյակ լինի աղբյուրի հետ առնչվող բոլոր հանգամանքներին, այլ խոսքով՝ հստակ պատկերացում պետք է ունենա ոչ միայն տվյալ դարաշրջանի մասին, այլև քաջածանոթ լինի տվյալ ժամանակաշրջանում գրառության մեջ օգտագործած հնարքներին, եթե կուզեք՝ նույնիսկ այդ դարաշրջանում ապրած մարդկանց հոգեբանական առանձնահատկություններին:

Չետազոտողն առանձնակի հետաքրքրություն չպետք է տածի հետագա սերունդներին ուղղված հորդոր - տեքստերի նկատմամբ. ընդհակառակը, իրականությանն ավելի մոտ են այն աղբյուրները, որոնք հատուկ այդ նպատակով չեն ստեղծվել և համեստորեն շարադրել են

իրենց ժամանակաշրջանի հիշարժան դեպքերը, այսինքն, ինչպես կասեր Փարպեցին՝ եղածը չպակասացնելով և չեղածը չավելացնելով: Օրինակ, մեր կարծիքով, հենց այս հանգամանքն է թույլ տալիս մեր առանձին պատմաբաններին՝ կասկածի տակ առնելու Մեծն Խորենացու կողմից «Չայոց պատմության» գրելու ժամանակաշրջանը, երբ նկատի են ունենում պատմահոր կողմից «Ողբը» գրելու փաստը, թեպետ մեր հաստատ համոզմամբ՝ հենց միայն պատմահայր լինելու հանգամանքը մեզ պետք է զրկի այլ և այլ եզրակացություններ կատարելու հնարավորությունից ու եթե կուզեք՝ իրավունքից:

Ինչևէ, աղբյուրների ստուգաբանության փուլին հաջորդում է **մեկնաբանության փուլը**: Չետագոտության այս փուլը որոշիչ հանգամանք է և մեծապես պայմանավորում է ուսումնասիրության կայացումն ու հաջողությունը: Պատմաբանից պահանջվում է հատվածաբար ձեռք բերված տեղեկությունները կապել միմյանց հետ և տեղավորել հետազոտության համատեքստում, ներկայացնել իրադարձությունների զարգացման ժամանակագրական պատկերն ու միտումները, որոնք հետագայում պետք է իրենց վերջնական հանգուցալուծումը ստանան աշխատանքի եզրակացությունների բաժնում:

Գիտական մեկնաբանությունը նաև ընթացակարգ է և հետազոտողի առաջ ուղղակի և որոշակի պայման է առաջադրում. բացատրել ներկայացված տեղեկությունը, ինչպես երևույթը ծնող նախադրյալների, այնպես էլ հանգամանքների ու արդյունքների առումով: Այլ կերպ ասած՝ այստեղ է հունցվում հետազոտության առարկա ողջ նյութը և այդ նյութի պատշաճին ներկայացումից է հետագայում բխելու Ձեր ուսումնասիրության հիմնական եզրակացությունները:

**Մամուլի նյութեր**: Մամուլի նյութերի մեջբերումով պատմաբան հետազոտողը վերականգնում և վկայակոչում է անցյալի իրադարձությունների չընդհատվող շղթան: Որպես կանոն, ժամանակի մամուլը կամ այլ կերպ ասած՝ թերթերն ու ամսագրերն առաջին հերթին արտացոլում են երկրում տիրող սոցիալ-քաղաքական իրավիճակը: Այս տեսակետից մամուլին վիճակված է երկակի նշանակություն ու դեր ունենալու Ձեր

հետազոտության մեջ: Ավելին՝ առաջին հայացքից այդ նյութերը նույնիսկ տարակարծություն կարող են առաջացնել Ձեզ մոտ՝

ա) պարունակում են արդյոք դրանք գիտական նյութ (նորահայտություն կամ ճշմարտություն),

բ) թե՛ դրանք ուղղակի առօրյա կյանքի՝ հասարակության ծանր իրավիճակի, նրա բանականության ու բարոյականության նկարագրություններ են:

Մյուս կողմից, սակայն, որ ժամանակի մամուլն ինչպես ասում են՝ հասարակության հայելին է և այնտեղ կարելի է գտնել առօրյա կյանքի կարևոր ելևէջների նկարագրությունը, դրանում երկու կարծիք լինել չի կարող: «Մամուլը, - սենատում իր ելույթներից մեկի ժամանակ հայտարարել է Նապոլեոնը,- այն զինապահեստն է, որը մատչելի չպետք է լինի բոլորի համար: Իմ կարծիքով, դրա օգտագործման իրավունքը պետք է տրվի միայն այն անձանց, ովքեր լիովին արժանացել են կառավարության վստահությանը: Նա, ով տպագիր է դիմում հասարակությանը, նման է հռետորի, որը հանդես է գալիս ժողովրդի առաջ և ինչ խոսք, նա չպետք է խանգարի իշխանությանը՝ արգելակելու ժողովրդի խռովության և ավերածության սադրանքը»:<sup>5</sup>

Մեկ խնդրանք ևս մամուլի նյութերի հետ աշխատող հետազոտողին. հնարավոր է, որ այնտեղ հաղորդած ոչ բոլոր տեղեկություններն են հավաստի, ուստի պետք է վերապահությամբ ընտրել ներկայացված նյութը: Ի վերջո՝ մամուլը, ինչպես արդեն նշեցինք, իր հիմնական բնույթով լինելով քաղաքական և ունենալով որոշակի կողմնորոշում և պաշտպանելով քաղաքական խավի կամ հասարակության նեղ զանգվածի շահերը, միանգամայն այլ տեսանկյունից կարող է ներկայացնել իրականությունը: Ուստի, հետազոտողից պահանջվում է մանրակրկիտ քննություն կատարել և նույնիսկ գնահատական տալ տվյալ թերթին կամ ամսագրին, անգամ մեղադրելով նրան իր կողմնակալ դիրքորոշման համար: Ավելի հասկանալի լինելու համար, մեջբերում ենք 1815 թվականի մարտի 9-22-ը ֆրանսիական թերթերում Նապոլեոն Բոնա-

---

<sup>5</sup> Л. Соломон, История периодики. СПб, 1904, с.86

պարտի մասին պատմող հողվածների վերնագրերը. Դուք ուղղակի հետևեք ներկայացվող վերնագրերի տրամաբանական զարգացմանը.

«9 մարտի՝ «Վիշապը դուրս եկավ իր որջից»:

«10 մարտի՝ «Կորսիկական մարդակերը տեղափոխվեց ժուանի ծոց»:

«11 մարտի՝ «Վագրը հասավ Կանն»: «Յրեշը գիշերն անցկացրեց Գրենոբլում»:

«...18 մարտի՝ «Բոնապարտը գտնվում է մայրաքաղաքից վեց լիե հեռավորության վրա: Նա կարողացավ խուսափել հետապնդողներից»:

«... 21 մարտի՝ «Կայսրը կանգ առավ Ֆոտենբլոյում»:

Եվ վերջապես՝ 22 մարտի՝ «Նորին կայսերական գերազանցությունը երեկ գնաց Տյուրի, որտեղ նրան հավատարիմ հպատակները դիմավորեցին ուրախ բացականչություններով և հիացմունքով»: Ինչպես ասում են՝ մեկնաբանություններն այստեղ ավելորդ են:

Ի դեպ, Նապոլեոնին է պատկանում նաև ֆրանսիական մամուլին տրված հետևյալ ցուցումը. «Երբ ստանում եք կառավարության համար անցանկալի որևէ տեղեկություն, այն չպետք է տպագրվի թերթում այնքան ժամանակ, մինչև որ նրա անսխալական լինելը այնքան պարզ կդառնա, որ այն տպագրելու անհրաժեշտություն այլևս չի լինի, քանի որ այն, առանց այն էլ բոլորին արդեն հայտնի կլինի»<sup>6</sup>:

Եվ այդուհանդերձ, մամուլի հաղորդած տեղեկությունը կարող է կարևոր աղբյուր հանդիսանալ Ձեր կողմից «գտած» նյութը հիմնավորելու համար: Եվ եթե համեմատելու լինեք հավաքած մյուս նյութերի հետ, ապա մամուլից քաղած նյութերը բավականին սովորածավալ կարող են լինել նույնիսկ արխիվային նյութերից: Իհարկե, այստեղ էլ պետք է առաջնորդվել որոշակի չափանիշերով. առաջնությունը պետք է տալ առավել հանրահայտ պարբերականներին: Այդուհանդերձ, համարենք, որ այս փուլը ևս Ձեզ մոտ հաջողվել է և Դուք պատրաստ եք շարունակելու աշխատանքը:

---

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 89:

**Վիճակագրական տեղեկություններ:** Պատմական հետազոտության կարևոր աղբյուրներից մեկը վիճակագրական տվյալներն են: Վիճակագրություն ասելով, մենք առաջին հերթին նկատի ունենք թվական տվյալների ներկայացում: Հենց սկզբից պետք է շեշտենք, որ այստեղ արդեն մենք գործ ունենք բացառապես պաշտոնական տվյալների հետ և պատահական թվական տվյալների մեջբերումը գիտական աշխատանքի համար ուղղակի անթույլատրելի է: Այլ խոսքով՝ վիճակագրական տվյալները Ձեր աշխատանքի թվային նկարագրությունն են: Այս տվյալները առավել օգտագործելի են, երբ Ձեր աշխատանքը նվիրված է սոցիալ-տնտեսական հարցերի լուսաբանությանը:

Վիճակագրական տեղեկությունները հիմնականում բացահայտում են հասարակական երևույթների օրինաչափությունները, հաստատում են հասարակական երևույթների միջև եղած փոխադարձ կապը: Ավելին, հետազոտողը փոխանակ երկար-բարակ խոսելու ինչ-որ մի երևույթի թողած սոցիալ-քաղաքական հետևանքների մասին, վիճակագրական մի աղյուսակի ներկայացումով կարող է միանգամայն պարզ ու հասկանալի դարձնել իր ասելիքը, քանի որ թվերն ինքնին արդեն ասվածի խոսուն ապացույցն են: Վիճակագրական տվյալների առավել օգտագործելի տեսակը աղյուսակների, դիագրամաների կազմումն է, ինչը, հատկապես. կիրառելի է ժողովրդագրական հարցերի լուսաբանման ընթացքում:

Պատմական հետազոտության ներկայիս տեխնոլոգիական նոր մեթոդների կիրառելի ձևերից մեկը պատմագիտության մեջ ականատեսների վկայությունների ձայնագրությունն է: ԱՄՆ-ում և եվրոպական երկրներում այն արդեն բավականին տարածված տեսակ է և կոչվում է «բանավոր պատմություն»: Հետազոտության այս նոր մեթոդը ենթադրում է պատմական դեպքերին ականատես-վկաների հետ կենդանի հարցազրույց և թեպետ որոշակի նմանություն ունի սոցիոլոգների և լրագրողների մասնագիտական գործունեության հետ, սակայն պատմական առումով այն ևս կարող է կարևոր տեղեկություններ հայտնել այս կամ այն իրադարձության մասին, որոնք տարբեր հանգամանքներ

րի բերումով (առաջին հերթին՝ քաղաքական) հասարակական հնչեղություն չեն ստացել:

Մեր՝ հայ ժողովրդի, պատմության պարագայում այն արդեն ձեռք է բերել կարևոր աղբյուրագիտական նշանակություն. հիշենք միայն, թե ինչպիսի աղբյուրագիտական նշանակություն ունեն Մեծ Եղեռնից փրկված հայերի վկայությունները թուրք ցեղասպանների կատարած ոճրագործությունների մասին, որոնց մասին թուրքական և առանձին օտար աղբյուրներ, քաղաքական տարբեր դրդապատճառներով ուղղակի լռում են: Եվ ի պատիվ հայրենի պատմաբանների, պետք է նշել, որ մեզանում նման հրատարակություններն արդեն անցնում են մեկ տասնյակից:

**Հուշագրություններ:** Հուշագրությունը ևս դասվում է գրավոր աղբյուրների թվին: Դրանք հիշողություններ են անցյալում կատարված իրադարձությունների մասին, որոնց անմիջական մասնակիցն ինքը ականատեսն է: Հուշագրությունները հիմնականում գրվում են սկզբում ընտանիքի անդամների համար, հետո արդեն այն դառնում է ընթերցողի և լայն հասարակայնության սեփականությունը: Չի կարելի պնդել, թե յուրաքանչյուր հուշագրության հեղինակ իր առջև նպատակ է դնում օբյեկտիվ ներկայացնել իրադարձությունները: Դրանց մի մասն անշուշտ, գրվում է սեփական գործողություններն արդարացնելու նպատակով և եթե կուզեք՝ որոշ առումով նույնիսկ «պաշտպանական» նպատակ է հետապնդում:

Անժխտելի է, որ հուշագրություններում շատ հեղինակներ արտահայտում են իրենց համակրանքը, հաճախ նաև հակակրանքը պատմական անձանց նկատմամբ, առանձին դեպքերում հանրահայտ փաստերն անգամ կարող են այլ մեկնաբանություն ստանալ: Ուստի, հուշագրությունների պարագայում հարկ է, որ հետազոտողը որոշակի վերապահություն դրսևորի հեղինակի կատարած եզրակացությունների հարցում: Մյուս կողմից, սակայն, հուշագրություններն այնպիսի փաստեր ու մանրամասներ են պարունակում, որոնք չեք գտնի և ոչ մի գրավոր աղբ-



յուրում: Այս տեսակետից արդեն հուշագրությունները կարող են կարևոր նշանակություն ունենալ հարցի բազմակողմանի քննության խնդրում:

Պատմաբանի համար անգնահատելի օգնություն են **ռազմական հուշագրությունները**, որոնք գրվում են հայտնի զորապետերի, պատերազմին մասնակից սպաների կողմից: Պատկերացրեք, թե որքան աղքատիկ կլինեին մեր գիտելիքները Չայրենական մեծ պատերազմի մասին, եթե չլինեին այդ հաղթանակն ապահոված զորապետերի հուշագրությունները (մենք նկատի ունենք Գ. Ժուկովի, Յ. Բաղրամյանի, Կոնևի, Ռոկոսսովսկու և մյուսների հուշագրությունները): Ի վերջո, կառավարական ցանկացած հաղորդագրություն ռազմական իրադարձության միայն սեղմ և բազմաթիվ անգամ խմբագրման ենթարկված նյութ է, ինչը, բնականաբար, չի կարող բավարարել հետազոտողին: Կամ ասենք, հայոց պատմության պարագայում. Անդրանիկի, Դրոյի, Ռուբենի, Կրացյանի, Ահարոնյանի հուշերն ուղղակի ձևավորում են այդ ժամանակաշրջանի պատմության մեր պատկերացումները, քանի որ գրեթե բացակայել են այդ մասին պատմող աղբյուրները, էլ չենք խոսում պաշտոնական աղբյուրների մասին:

Բերենք հենց մեր կողմից վերջինը հիշատակված Ավետիս Ահարոնյանի հուշերից մի պատառիկ միայն. «Այսօր, փետրվարի 20-ին (1922 թ.՝ Յ.Յ.) ճաշից հետո ժամը 5-ին Նորատունկյանի հետ միասին տեսնվեցանք Պուանկարեյի հետ (Ֆրանսիայի վարչապետ՝ Յ.Յ.): Նորատունկյանը, առաջինը խոսք առնելով, ծանրացավ Թուրքաց Չայաստանի վրա... Կովկասում և այլուր 500 հազարի չափի հայ փախստական սպասում են իրենց հայրենիքը վերադառնալուն: Չայությունը կկարողանա Ազգերի լիգային առաջարկել 5000 հայ կամավորականներ և 25 միլիոն դոլար, եթե հոգատար մի պետություն հանձն առնի Չայաստանը իր խնամքի տակ առնել ու կարգավորել: Անհնարին է Թուրքիայում ապահովել հայության վիճակը, որովհետև թուրքերը հազար հնար ունեն խախտելու այդ կարգի համաձայնությունները. նրանք ջարդարարներ են, անվստահելի և անուղղելի:

Պուանկարեն, որ լսում էր ակնհայտ տհաճությամբ, վերջին խոսքերից առաջ զայրույթով ձեռքը սեղանի վրա ցնցեց ու բացականչեց. «Թողեք խնդրեն անցյալը: Մենք հնար չունենք թուրքերին պատերազմ անելու: Ես չեմ կարող ժամանակս կորցնել: Խոսենք իրականությունից...»:<sup>7</sup>

Պատմական գրավոր աղբյուրի տարատեսակ է նաև **օրագիրը**: Այն որպես պատմական աղբյուր ոչ միայն չի զիջում հուշագրությանը, այլև որոշ առումով նույնիսկ գերազանցում է վերջինիս: Օրագրի արժեքը գրանցումների հաջորդականության մեջ է. նրանում հեղինակը ներկայացնում է կոնկրետ ժամանակահատվածում ծավալված իրադարձություններն ու փաստերը, ինչու չէ՝ նաև թղթին է հանձնում իր զգացումներն ու ընկալումները, տպավորությունները և այլն: Օրագրում, որպես կանոն, յուրաքանչյուր գրանցումից հետո նշվում է ամսաթիվը, վայրը, որը կարևոր նշանակություն ունի իրադարձության գնահատության խնդրում: Ավելին, ի տարբերություն հուշագրության, օրագրի հեղինակները սովորաբար անկեղծ են իրենց դատողություններում և արտահայտած կարծիքների մեջ, քանի որ նրանք ի սկզբանե նպատակ չեն դնում գրել սովորական ընթերցողի համար:

Պատմության և հատկապես քաղաքական պատմության ուսումնասիրության խնդրում ներկայացված աղբյուրներից բացի, կարևոր արժեք են ներկայացնում նաև **քաղաքական բնույթի դիմումները, կոչերը, թռուցիկները** կամ մեկ բառով արտահայտած՝ հրապարակայնորեն ասված խոսքը: Եվ թեպետ վերջինս պատմական արժեքի տեսանկյունից որոշակիորեն զիջում է վերևում ներկայացված պատմական աղբյուրներին, սակայն հրապարակայնորեն ասված խոսքը ունի մեկ կարևոր առավելություն. այն նպաստում է հասարակական կարծիքի ձևավորմանը և առավել իրական է ներկայացնում երկրի սոցիալ-քաղաքական իրավիճակը:

---

<sup>7</sup> Տես՝ Ավ. Ահարոնյան, Սարդարապատից մինչև Լոզան, Երևան, 2001, էջ 219:

Պատմական աղբյուր են նաև **կերպարվեստի նմուշները և ճարտարապետական հուշարձանները**, որոնք անուղղակի կերպով նկարագրում են այն դարաշրջանը, որում դրանք ստեղծվել են: Սյուսբոլոր աղբյուրների նման, կերպարվեստի նմուշները և ճարտարապետական հուշարձանները ևս պետք է մանրակրկիտ ուսումնասիրվեն և նկատի առնվեն այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են հուշարձանի կամ կտավի ստեղծման պատմությունը, ֆինանսավորման աղբյուրը, պատվիրատուի անձը և դիրքը հասարակության մեջ, կամ ասենք՝ ի՞նչ տեսքով է հուշարձանը մեզ հասել, առաջնայի՞ն տեսքով, թե փոփոխված, ո՞րն է եղել փոփոխության պատճառը, ի՞նչ նյութից է կառուցվել, ո՞րքան է տևել շինարարությունը և այլն:

**Լուսանկարը և վավերագրական կինոն** ևս հավակնում են պատմական աղբյուր կոչվելուն: Դրանք պատմական իրադարձությունների լուսանկարային և վավերագրական արտահայտչաձևեր ու միջոցներ են, ուր պատկերված է ժամանակի իրական ու ճշմարիտ հետքը: Իհարկե, լուսանկարների հետ աշխատելիս պետք է նկատի ունենալ այն նույն պահանջները, ինչի մասին մենք խոսեցինք նախորդ աղբյուրների քննության պարագայում. լուսանկարը ևս կարող է կեղծվել: Ուստի ավելորդ չի լինի հետազոտողի կողմից պարզել, թե ում կողմից և ինչ նպատակով է ստեղծվել այն:

Այս ամենով հանդերձ, լուսանկարները կարևոր և անգնահատելի աղբյուր են պատմական, հատկապես կատարված իրադարձության, հավաստիությունը ապացուցելու խնդրում: Պատկերացրեք, թե որքան դժվար էր լինելու միջազգային հանրությանն ապացուցելու Հայոց Մեծ եղեռնի իրողությունը, եթե չպահպանվեին այդ ամենը հաստատող լուսանկարներ և վավերագրական կադրեր: Եվ թեպետ լուսանկարը և վավերագրական կինոն մեզանում ընդունված է համարել պատմական լրացուցիչ աղբյուր, սակայն մեր կարծիքով, առանձին դեպքերում վերջիններիս դերը դժվար է չգերազանահատել: Չմոռանանք, որ լուսանկարում զետեղված մակագրությունները և թվագրումները ևս կարևոր տե-

ղեկություն են պարունակում և անշուշտ, պատմական աղբյուրի արժեք ունեն:

Եվ վերջապես, պատմական աղբյուրի է նաև մեզանում բավականին կիրառություն ստացած **պատմական քարտեզը**: Քարտեզը գծանկարչական-տեղեկատվական աղբյուր է, որն իր մեջ ներառում և լրացնում է մյուս աղբյուրների հաղորդած տվյալները: Քարտեզի նշանակալից տարրը նրա բովանդակությունն է, այսինքն՝ քարտեզագրական պատկերը, որը ներկայացվում է պայմանական նշանների միջոցով: Իհարկե, քարտեզի՝ որպես պատմական աղբյուրի առաջին և կարևոր արժանիքը նրանում նշված տեղանուններն են, որոնք, հատկապես, հայոց պատմության առանձին ժամանակահատվածների ուսումնասիրության համար անգնահատելի արժեք ունեն. գաղտնիք չէ, որ ներկայումս մեր երկու «եղբայրակից հարևանները» մեծ ջանադրությամբ փորձում են նոր քարտեզների տպագրությամբ ջնջել և վերացնել հազարամյակների պատմություն ունեցող մեր քաղաքների, գյուղերի ու շենների հայկական տեղանունները:

Քարտեզները նաև յուրատեսակ դասագրքի դեր են կատարում, եթե նկատի ունենաք այն հանգամանքը, որ շատ քարտեզներ հնարավորություն են տալիս նշելու ոչ միայն տեղանունները, այլև այնտեղ գոյություն ունեցող հոգևոր հաստատությունները՝ վանքերն ու եկեղեցիները, մշակութային օջախները, տնտեսական համայնապատկերը:

Պատմական աղբյուրների մասին ներկայացրած մեր տեսությունը կարծում ենք թերի կլիներ, եթե անդրադարձ չկատարենք ներկայումս բավականին կիրառելի և տարեցտարի լայն թափ առնող տեխնոլոգիական նորամուծություններին, որոնք վաղուց արդեն ներթափանցել են գիտական ոլորտ, այդ թվում նաև պատմագիտության մեջ: Խոսքը **էլեկտրոնային աղբյուրների (միջոցների)** և առաջին հերթին **ինտերնետի** մասին է:

Չիմա արդեն անվարան կարելի է ասել, որ էլեկտրոնային այս աղբյուրին է վիճակված դառնալու այս ոլորտի ամենից հասանելի աղբյուրը, քանի որ եթե տվյալ պահին անհրաժեշտ գրքի որոնումը կարող է

Ձեզանից երկար ժամեր և նույնիսկ օրեր խլել, ապա ինտերնետի միջոցով րոպեների ընթացքում կարելի է գտնել, ընթերցել և նույն պահին անգամ պատճենահանել անհրաժեշտ ցանկացած նյութը: Ուստի, մենք կարևոր ենք համարում մի քանի անհրաժեշտ խորհուրդներ տալ հետազոտողին, թեպետ պիտի խոստովանենք, որ մի քանի տարի անց այն կարող է արդեն հնացած լինել, եթե նկատի ունենաք էլեկտրոնային միջոցների ժամ առ ժամ զարգացումն ու հնարավորությունների ընդլայնումը:

**Նախ և առաջ՝** անհրաժեշտ է հիշել, որ ինտերնետում նյութ որոնելիս հարկ է նշել ամսաթիվը, քանի որ ինտերնետում պարբերաբար իրականացվում է նյութի նորացում:

**Ֆաջորդ խորհուրդը.** ինչպես ցանկացած աղբյուրի, այնպես էլ ինտերնետում տեղադրված նյութերի նկատմամբ պետք է վերապահություն դրսևորել, այլ խոսքով պետք է խուսափել օգտվել արժանահավատություն չներշնչող աղբյուրներից և նյութերից: Այդ գործում Ձեզ մեծապես կօգնեն ինտերնետում առկա և արդեն ժամանակի քննությունը բռնած մի քանի ուղիներ: Մենք առաջին հերթին նկատի ունենք «Գուգլ» (google) և «Յանդեքս» (yandex) ինտերնետային ուղիները: Առաջինն արդեն թողարկել է իր հայկական տարբերակը, որը մեծապես կիեշտացնի անհրաժեշտ աղբյուրի հայերեն լեզվով փնտրումը: «Գուգլ» որոնման ցանցի հասցեն է՝ [google.am](http://google.am): Գոյություն ունեն նաև նույնի [google.com](http://google.com) և [google.ru](http://google.ru) կայքերը, որոնք ևս բավականին հուսալի են և օգտակար են հատկապես ռուսերեն և օտար լեզուներով գրականության փնտրելու պարագայում:

Օգտակար մի քանի խորհուրդներ ևս.

**Առաջին.** ինտերնետ համակարգի հուսալիությունը և որակը ապահովում են հատկապես «**edu**», «**ac**», «**gov**» կամ «**org**» կայքերը, որոնք կազմված են ակադեմիական, կառավարական և կրթական հաստատությունների կողմից: Այդ կայքերում տեղադրված նյութերն ու տեղեկատվությունն առավել հուսալի են: Դուք հիմա կառարկեք, թե այլ

կայքերով ներկայացված նյութերը ևս իրենց մեջ կրթական և ուսումնական ուղղվածության տեղեկատվություն են պարունակում, սակայն դրանք մեր կարծիքով, առավելապես առևտրային բնույթ ունեն. համեմայն դեպս, համոզվելու համար մեկ անգամ ևս ստուգեք նյութի հավաստիությունը:

**Երկրորդ.** հուսալիության են ապահովում այն նյութերը, որոնք տեղակայված են ոչ միայն ինտերնետում, այլև հրատարակված են և ինտերնետում տեղադրված է վերջինիս իսկական կամ ինչպես ընդունված է ասել՝ օրիգինալ տարբերակը: Մեր խորհուրդը Ձեզ՝ հետևողականորեն խուսափեք վերաշարադրված կամ վերարտադրված տարբերակներից: Ի դեպ, իսկականը վերաշարադրվածից տարբերելը գրեթե դժվարություն չի ներկայացնում. որպես կանոն, նմանատիպ գրականությունը կամ աղբյուրը ներկայացված է ինչպես ընդունված է ասել՝ **ՊՂՖ (PDF)** տարբերակով: Այն ուղղակի գրքի կամ նյութի լուսանկարված պատճենն է և Ձեզ մնում է ուղղակի թերթել գրքից ոչնչով չտարբերվող նյութի էջերը: Օրինակի համար, հետազոտողներից շատերը, որոնց թեման առնչվում է 19-րդ դարի պատմության հետ, պետք է անպայման օգտվեն այնպիսի նշանավոր մի հրատարակությունից, ինչպիսին Կովկասի հնագրագիտական հանձնաժողովի կողմից հրատարակված նյութերն են. այն մեզանում առավել հայտնի է որպես АКАК` Акты кавказской археографической комиссии (Կովկասի հնագրագիտական հանձնաժողովի նյութեր). Այսպես ուրեմն, այն գտնելու համար բավական է մտնել [google.ru](http://google.ru) և փնտրման սյունակում գրել ուղղակի վերջինիս առաջին բառերը՝ Акты кавказской археографической... և կայքը միանգամից կհասկանա և Ձեզ կհուշի հետագա անվանումը, որից հետո Դուք պետք է տաք փնտրում և կայքը Ձեր առաջ կբերի АКАК-ի բոլոր 12 հատորների PDF տարբերակները: Ձեզ մնում է միայն սեղմել բեռնումը (скачать) և նշված հատորները կարող եք արդեն համարել Ձեր սեփականը:

Մեկ խորհուրդ ևս սկսնակ հետազոտողներին՝ իմ սեփական փորձից ելնելով, Դուք կարող եք աշխատել արդեն բեռնված գրքի հետ ավե-

լի արդյունավետ, խնայելով թե՛ թուղթ, թե՛ ավելորդ ժամանակ՝ պատճենահանման համար: Դրա համար հարկավոր է միայն Ձեր համակարգչի էկրանը բաժանել երկու մասի, մի մասում բացել արդեն բեռնված գիրքը, իսկ մյուս մասում բացել նոր էջ՝ ինչպես Դուք եք ասում՝ «word document» և էկրանից կարդալով գիրքը, Դուք կարող եք միանգամից քաղվածք կամ անհրաժեշտ գրառում կատարել Ձեր տեքստում: Սկզբում մի քիչ դժվար կլինի, սակայն հետագայում, հավատացեք իմ փորձին, այն կխնայի Ձեր ժամանակը և մեծապես կբարձրացնի Ձեր աշխատանքի արդյունավետությունը, ինչը, մեր կարծիքով, գիտական աշխատանքի կարևոր բաղադրիչները մեկն է:

**Երրորդ.** ինչպես արդեն նշեցինք, առավել հուսալի նյութերը տեղակայված են արդեն ձանաչման արժանացած ինտերնետ-էջերում. օրինակ գրադարանների, արխիվների և համալսարանների ինտերնետ կայքերում:

**Չորրորդ.** Ինտերնետ-նյութի հուսալիություն ասելով Դուք առաջին հերթին պետք է նկատի ունենաք հեղինակին, նրա ձանաչելության աստիճանը, այսինքն՝ որքանով է այդ հեղինակն ընդունված պատմագիտական շրջանակներում և ի վերջո, Ձեզ համար պարզեք գլխավոր չափանիշը. որքանով է այդ նյութը գիտական:

Ներկայացնում ենք ինտերնետի մի քանի հուսալի հասցեներ, որոնք կարող են օգտակար լինել Ձեզ.

- Հայաստանի ազգային գրադարան, որի կայքից կարող եք ներբեռնել պատմական բովանդակության գրքեր: Ճիշտ է, այդ ցանկը այնքան էլ մեծ չէ, սակայն, տարեցտարի այն գնալով հարստանում է: Կայքի հասցեն է՝ **nla.am**:

- Հայաստանի ազգային արխիվ. ճիշտ է, մտածել, որ Ձեզ անհրաժեշտ փաստաթղթերը կարող եք ամբողջովին ձեռք բերել այս կայքից, ուղղակի անհնար է: Ուստի լավագույնը, որ կարող ենք խորհուրդ տալ Ձեզ՝ հետևեք այնտեղ տեղադրված և Ձեր թեմային վերաբերող ֆոնդերի և ցուցակների սեղմ նկարագրություններին, որը մեր կարծիքով, քիչ օգնություն չէ: Կայքի հասցեն է՝ **armarchives .am**:

- Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի գիտական գրադարան: Կայքի հասցեն է՝ **flib.sci.am**:

- Երևանի պետական համալսարանի գրադարան: Կայքի հասցեն է՝ **vle.lib.am**:

Յետևեք նաև ռուսական գիտական հիմնարկների՝ Ռուսաստանի պետական դաշնային գրադարանի, Ռուսաստանի պետական դաշնային արխիվի, Մոսկվայի պետական համալսարանի և մյուս հանրահայտ գիտական հիմնարկների կայքերին: Այդ կայքերի հասցեները կարելի է հեշտությամբ գտնել՝ հաճախելով [google.ru](http://google.ru), այնուհետև տալ փնտրում՝ ուղղակի գրելով Ձեր ցանկալի գիտական հիմնարկի լրիվ անունը: Այսպես, օրինակ, դիցուք ուզում եք գտնել Ռուսաստանի պետական գրադարանի կայքը. բավական է գրել **Российская государственная библиотека** և Ձեր առջև կհայտնվի **rsl.ru**: Համարեք, որ կայքը գտնելու խնդիրն արդեն լուծել եք:

Առաջարկում ենք օգտվել նաև օտարերկրյա հանրահայտ գիտական հիմնարկների կայքերից, որոնք, ճիշտ է՝ օտարալեզու են, սակայն լեզուների Ձեր իմացությունը կօգնի Ձեզ՝ կարևոր շատ նյութեր ներբեռնել աշխատանքի համար:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԿԱԶՄՈՒՄԸ

Եվ այսպես, ընդունենք, որ հանձնարարված գրականությունը և աղբյուրներն արդեն հավաքել եք և Դուք պետք է սկսեք աշխատել դրանց վրա: Սակայն շտապելու կարիք չկա. վերցրեք մաքուր մի թուղթ և փորձեք մտքում ուրվագծել ապագա աշխատանքի **ընդհանուր կառուցվածքը**, Ձեր լեզվով ասած՝ պլանը: Երբեք մի կարծեք, թե առաջին իսկ փորձից հնարավոր կլինի անսխալ և անթերի որոշել կատարվող աշխատանքի կառուցվածքը: Նույնիսկ ամենագիտակ պատմաբանը չի կարող միանգամից որոշել իր նախանշած աշխատանքի կառուցվածքը՝ իր բոլոր ենթահարցերով հանդերձ: Այնպես որ, շտապել պետք չէ և հարկավոր է թղթին ներկայացնել թեմայի այսպես ասած, աշխատանքային կամ պայմանական տարբերակը:



Սկզբում փորձեք ուրվագծել աշխատանքի հիմնական գլուխները, եթե կհաջողվի՝ նաև ենթագլուխները (բաժինները): Ընդ որում, պետք է հիշել, որ գլուխները անպայմորեն պետք է արտահայտեն թեմայի հիմնական բովանդակությունը, իսկ ենթագլուխները՝ տվյալ գլխի հիմնական բաղադրիչները: Իհարկե, այդ ամենին Դուք միանգամից չեք հասնի: Աշխատանքի կառուցվածքի մասին Դուք կմտածեք դեռ նրա հիմնական բովանդակությունը որոշելիս, ուստի հարկ կլինի անպայման դիմել գիտական ղեկավարի օգնությանը: Ամեն դեպքում, Ձեր կողմից ուրվագծված կառուցվածքն անպայման պետք է համաձայնեցնել գիտական ղեկավարի հետ, իսկ վերջնական տեսքի կրերեք միայն այն ժամանակ, երբ կավարտեք հանձնարարված գրականության ընթերցումը: Այս հանձնարարականներից հետո միայն արդեն կարելի է հարցն ավարտած համարել:

Գիտական աշխատանքին ձեռնամուխ լինելիս, հարկավոր է, որ Դուք Ձեր գիտական ղեկավարի հետ միասին որոշեք աշխատանքի հիմնական ժամկետները՝ երբ պետք է ավարտել մատենագիտական ցանկի կազմումը, աղբյուրների և գրականության մշակումը, առանձին գլուխների շարադրումը և երբ պետք է ներկայացնել ամբողջական աշխատանքը: Ժամկետները որոշելիս, պետք է նկատի ունենալ նաև շարադրված աշխատանքի առաջին տարբերակի ընթերցումը, մեքենազրման և մաքրագրման աշխատանքները:

Որպես կանոն, ատենախոսությունները և դիպլոմային աշխատանքները անցնում են նախնական պաշտպանության փուլ համապատասխան ամբիոններում (բաժիններում), որտեղ լսելով և քննարկելով կատարող հետազոտողի (ուսանողի), ինչպես նաև գիտական ղեկավարի հաղորդումները, որոշում են կայացնում աշխատանքը հրապարակային պաշտպանության թույլատրելու մասին: Մշտապես պետք է հիշել, որ ժամանակին չներկայացված դիպլոմային և կուրսային աշխատանքները ամբիոնն իրավասու է հանել հրապարակային պաշտպանությունից:

## ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄԸ

Գիտական աշխատանքների կազմակերպման հաջորդ կարևոր, եթե ոչ կարևորագույն փուլը **հանձնարարված գրականության մշակումն** է: Աղբյուրների և գրականության մշակումն օգնում է հետազոտողին (ուսանողին) տիրապետելու գիտական ուսումնասիրության մեթոդիկային: Մշտապես պետք է հիշել որ գիտական աշխատանքը կառուցվում է բացառապես փաստական նյութի հիման վրա: Հետազոտողը, լինի ասպիրանտ, թե կուրսային կամ դիպլոմային աշխատանք գրող ուսանող, որքան հնարավոր է, պետք է առավելագույնս փաստեր հավաքի և ուսումնասիրի իրեն հասանելի ողջ գիտական գրականությունը, ինչը վերաբերում է իր թեմային: Հայտնի է, որ փաստական նյութի հավաքման գլխավոր աղբյուրը պատմագիտական գրականությունն է: Հավաքելով պատմական նյութերը, Դուք հենց սկզբից խորհրդակցելով աշխատանքը ղեկավարող դասախոսի հետ, պետք է կատարեք հանձնարարված գրականության խմբավորում:

Բնականաբար, հավաքած նյութերի մեջ կլինեն թեմային վերաբերող փաստագրական բազմապիսի նյութեր, փաստաթղթերի ժողովածուներ, հուշագրություններ և այլ աղբյուրներ: Ձեզանից ոմանք, հատկապես ատենախոսություն կամ դիպլոմային աշխատանք պատրաստողները, ցանկություն կհայտնեն աշխատել արխիվներում: Բանն այն է, որ շատ հետազոտողների հենց սկզբից այսպես ասած, «գայթակղում» է արխիվային նյութը՝ համարելով, որ միայն այնտեղ կարելի է գտնել հիմնահարցի սպառիչ պատասխանը: Իրականում, իհարկե, արխիվային փաստաթուղթն է, որ հիմնավորում է ուսումնասիրողի առաջարկած տեսակետը, սակայն հարցն էլ հենց նրանումն է, որ արխիվ մուտք գործելուց առաջ, Դուք պետք է հստակ գիտենաք, թե հատկապես ինչ նյութ է Ձեզ հարկավոր այնտեղ և որ նյութն եք պատրաստվում այնտեղ փնտրել, որի պատասխանը չեք գտել հանձնարարված գրականության մեջ:

Քանի որ խոսք բացվեց արխիվային նյութերի մասին, ապա պետք է նշել, որ դրանք իրավացիորեն համարվում են ամենից դժվար ձեռքբերովի աղբյուրը: Մի կողմից, ստվարածավալությունը, մյուս կողմից, նյութերի տարալուծվածությունը ամենատարբեր փաստաթղթերի և արխիվային ֆոնդերի մեջ, ինչպես նաև՝ փաստական հարուստ, սակայն միաժամանակ, նրանցում պարունակող մեկնաբանությունների գրեթե բացակայությունը, հաճախ նաև տեքստի անընթեռնելիությունը, այս ամենը ուսումնասիրողից պահանջում են մեծ համբերություն և թեմային վերաբերող գրականության գերազանց իմացություն՝ որպեսզի կարելի լինի դրանք համեմատել հաղորդվող տեղեկությունների և արդեն հայտնի փաստական նյութի հետ:

Սակայն վիատվել պետք չէ. Ձեզ օգնության կգան արխիվային ամենատարբեր ուղեցույցները, իսկ եթե կրկին կդժվարանաք, ապա դիմեք արխիվի աշխատակիցների օգնությանը, որոնք բավականին գիտակ են այդ խնդրում: Միաժամանակ, չպետք է մոռանալ, որ արխիվ մուտք գործելու համար Դուք պետք է ձեռք բերեք համապատասխան թույլտվություն, որի համար հարկ կլինի դիմել դեկանատ՝ արխիվի ղեկավարությանն ուղղված գրություն ստանալու համար:

Կուրսային և դիպլոմային աշխատանքների կազմակերպման կարևոր փուլերից մեկը **գրքի հետ աշխատանքն է**: Ընդունենք, որ պահանջվող գիրքը Ձեր սեղանին է: Մինչ կանցնեք նրա ընթերցմանը, ցանկալի է, որ Դուք նախապես ծանոթանաք գրքի հետ. սկզբում կարդացեք գրքի համառոտագրությունը՝ անոտացիան, նախաբանը և բովանդակությունը: Գրքի տիտղոսաթերթում և նրա հաջորդ էջում տեղադրված են մատենագիտական բոլոր տվյալները: Վերնագրերից արդեն Դուք կպարզեք, թե որ հարցում կարող է այն օգտակար լինել: Հետևեք նաև գրքի ծանոթագրությանը, որտեղ հակիրճ տրված են այն հիմնական հարցերը, որոնց մանրամասն պատասխանները կարող եք իմանալ գրքի ընթերցումից հետո: Ծատ գրքեր սկսվում են հեղինակի առաջաբանով, որտեղ ևս համառոտ ներկայացված է աշխատության նպատակները և գրքում լուսաբանության առարկա հիմնահարցերը:

Սովորաբար, գիտական աշխատության վերջում ներկայացվում են հեղինակի եզրակացությունները և համառոտագրությունը օտար լեզվով: Փորձառու հետազոտողը նույնիսկ եզրահանգումներից կարող է կարծիք կազմել, թե որքանով է գիրքն անհրաժեշտ իր համար: Հաջորդ կարևոր խորհուրդը. հետևեք նաև գրքի վերջում կցված տեղանունների և անունների այբբենական անվանացանկին, որն էապես կհեշտացնի Ձեր աշխատանքը՝ գտնելու Ձեր համար կարևոր անձի կամ աշխարհագրական տեղանվան մասին գրքում առկա նյութը: Վերջին տարիների հրատարակություններում գրքի վերջում տրված է նաև օգտագործված օտար բառերի և տերմինների բացատրությունը, այլ խոսքով՝ բառարանային պարզաբանումները:

Որպես կանոն, սկզբում պետք է կարդալ Ձեր թեմային անմիջական վերաբերող գրականությունը, որը խորքային պատկերացում է տալիս հիմնահարցի մասին, այնուհետև մյուս, այսպես կոչված լրացուցիչ գրականությունը: Եթե հիմնահարցը հատուկ ուսումնասիրված չէ և Ձեզ հետաքրքրող նյութը ցրված է առանձին ուսումնասիրություններում, ապա հարկավոր է առաջնորդվել թեմատիկ սկզբունքով. այսինքն՝ պետք է նայել, թե ինչպես են այդ հարցերը լուսաբանված մենագրություններում ու հոդվածներում:

Ինչպես արդեն նշեցինք, հետազոտողները հաճախ քիչ ուշադրություն են դարձնում հուշագրություններին, պաշտոնական բնույթի զեկուցագրերին և ականատեսների վկայություններին, մինչդեռ դրանք կարևոր և հավաստի աղբյուր կարող են հանդիսանալ հիմնահարցը ամբողջությամբ ըմբռնելու և նույնիսկ խնդրի առնչությամբ առանձին հարցեր ծգրտելու համար: Գլխավորն այստեղ աղբյուրի մանրամասն վերլուծությունն է և նրա հիմնական բովանդակությունը յուրացնելը: Իհարկե, այստեղ ևս Ձեզանից կպահանջվի գիտական բարեխղճություն. վկայությունները և զեկուցագրերը պետք է ներկայացվեն համակարգված, ուշադրություն դարձրեք դրանց թվագրություններին և նոր միայն կատարեք անհրաժեշտ եզրակացություններ:

Պատմագիտական գրականությունն ուսումնասիրելիս, հարկավոր է, որ Դուք ըմբռնեք տվյալ հեղինակի ընդհանուր մոտեցումը հիմնահարցին, հետևեք նրա գլխավոր ընդգծումներին և ապացույցների համակարգին: Հատկապես պետք է ուշադրություն դարձնել հեղինակի աշխատության աղբյուրագիտական հենքի վրա, թե որքանով են վերջինիս արտահայտած տեսակետները հիմնավորված: Ընդ որում, խորհուրդ է տրվում ընթերցել համեմատաբար վերջին տարիներին լույս տեսած պատմագիտական գրականությունը, որոնցում տրված է հիմնահարցի մասին ձևավորված վերջին տեսակետները:

Միանգամից պետք է ուսանողներին խորհուրդ տալ, որ չարժե որևէ գիրք կարդալ հենց այնպես, առանց որևէ նպատակի: Կարդացված յուրաքանչյուր գիրք ամենից առաջ **պետք է հետաքրքրի Ձեզ`** թե իր բովանդակությամբ և թե Ձեզ հուզող հարցերին պատասխան տալու հնարավորությամբ: Եթե կուզեք` գրքին պետք է հարցեր տալ և գրքի հետ խոսել: Մեկ կարևոր պայման ևս` հարկավոր է խուսափել հանձնարարված գրականությունը պարզապես արտագրելու գայթակրողությունից, ինչն ընդունելի չէ գիտահետազոտական աշխատանքի համար:

Դուք սկսում եք կարդալ գիրքը: Գրքի հետ աշխատելու մեզանում ընդունված ձևերից մեկը **համառոտագրումն է** (կոնսպեկտավորումը): Մեր կարծիքով, այդ եղանակն իրեն արդեն սպառել է: Համակարգչային և ներկայիս տեխնիկական բազում հնարավորությունների դարաշրջանում կարելի է շրջանցել աշխատատար և բավականին ժամանակ խլող այդ աշխատառժը: Համառոտագրելու մյուս ավելորդ կողմն էլ այն է, որ ուսումնասիրություններից շատերը կարող են ունենալ գրեթե նույն բովանդակությունը, ուստի կարիք չկա դրանք առանձին-առանձին համառոտագրել, քանի որ արդյունքում Դուք կունենաք նույն հարցի մասին միատեսակ տեքստեր: Ձեզ մոտ ուղղակի կստացվի միատիպ համառոտագրությունների հսկայական մի կույտ:

Միևնույն ժամանակ, մենք երբեք էլ այն կարծիքին չենք, թե ընթերցման ժամանակ անհրաժեշտ գրառումներ չպետք է կատարել: Ուղ-

ղակի աշխատեք ոչ թե արտագրել, այլ սեփական բառերով ու մտքերով փորձել սեղմել նյութը: Այստեղ չպետք է մոռանալ մեկ կարևոր պայման. նյութը քաղելուց հետո, անպայման պետք է գրել, թե որտեղից է վերցված այն, այլ խոսքով՝ էջը, մատենագիտական մյուս մանրամասներով հանդերձ: Մեկ խորհուրդ. ևս. աշխատեք նոր էջի անցնելիս, գրել նոր թղթի վրա: Ճիշտ է, ներկայիս թղթի սուղ պայմաններում (ես նկատի ունեմ գինը), կարելի է մտածել նաև տնտեսելու մասին, սակայն նոր էջի գաղափարն այն է, որ հետագայում, երբ Ձեզ մոտ նոր մտքեր առաջանան տվյալ հարցի մասին, ապա օգտագործելով արդեն թղթի ետևի երեսը, կարելի է համապատասխան սլաքների միջոցով լրացումներ կատարել: Լրացումները չչփոթելու համար, կարելի է դրանք համարակալել ինչպես էջի առաջին, այնպես էլ ետևի մասում:

Ինչպես արդեն նշեցինք, պարտադիր չէ ամբողջությամբ կարդալ հանձնարարված գրականության բոլոր գրքերը: Ուսումնասիրություններ կլինեն, որ Ձեզ համար կծառայեն որպես լրացուցիչ գրականություն, ուստի այդպիսի գրքերը պետք է ուշադրությամբ թերթել և փնտրել միայն Ձեզ անհրաժեշտ նյութը կամ բաժինը: Ավելին, ընթերցելով գիրքը, կարող եմ ծագել բազում հարցեր, որոնց պատասխանը Դուք չեք գտնում տվյալ գրքում, էլ չենք խոսում այն մասին, որ կարող եմ ուղղակի վիճահարույց մտքեր առաջացնել Ձեր մոտ:

Չանձնարարված գրականության հետ աշխատելիս, երբեք վաղվան մի թողեք՝ տվյալ պահին, հենց ընթերցման ժամանակ Ձեր մտքում առաջացած նոր մտքերը: Չավատացեք իմ փորձին, հենց այդ ժամանակ է, որ առաջանում են նոր մտքեր և խորհրդածություններ, որոնք կարող են փոխել մեր ունեցած տեսակետներն այդ հարցերում: Երբեք հույսը մի դրեք նաև Ձեր հիշողության վրա. առաջացած նոր միտքն անմիջապես գրի առեք: Ուստի, հենց աշխատանքի ընթացքում, երբ Ձեզ մոտ առաջանում են նոր մտքեր, ապա առանց հետաձգելու, այդ մտքերը հանձնեք թղթին: Այդպես եմ վարվել մեր շատ, նույնիսկ տաղանդավոր գիտնականներն ու գրողները: Այդպիսի գրառումները խորհուրդ է

տրվում կատարել առանձին թղթերի վրա, որպեսզի հետագայում հեշտ լինի դրանց տեղադրումը շարադրանքի համապատասխան բաժնում:

Իհարկե, կրկին անգամ ընդգծում ենք. նոր տեսակետ և կարծիք հայտնելու համար Ձեր միակ պաշտպանը սկզբնաղբյուրն է, այն էլ հավաստի՝ հաստատված պաշտոնական բնույթի փաստաթղթերում: Հիշեք նաև, թե ինչպես են ստեղծվում համաշխարհային փառքի արժանացած կտավները. երբեք չեք լսի տաղանդավոր կամ նույնիսկ սկսնակ նկարչից, թե մեկ օրում կամ մեկ ժամում է ստեղծել իր կտավը: Նրանք բոլորն էլ հաստատում են, որ փոքրիկ կտավն անգամ ստեղծել են ամիսների, գուցե և տարիների ընթացքում. նկարիչը օրվա ընթացքում կարող է վրձնի միայն մեկ հարված կատարել իր նկարի վրա: Այնպես էլ գիտական աշխատանքն է. եթե հոգեպես պատրաստ չեք աշխատանքը շարունակելուն, մի փորձեք Ձեզ արհեստականորեն տրամադրել. հարմար առիթը, ցանկության դեպքում, իրեն սպասեցնել չի տա: Իմ գիտական պրակտիկայում, օրինակ, պատահել է, որ մեկ ժամում երկու-երեք էջ են գրել, սակայն եղել են դեպքեր, որ այդ նույն ժամանակամիջոցում մեկ պարբերությունից այն կողմ չեմ կարողացել անցել: Ինչևէ. հուսահատվել պետք չէ. կարևորը Ձեր գրելու ցանկության պահը չկորցնելն է. դա արդեն աններելի է:

Սկսնակ ուսումնասիրողը պետք է հստակ պատկերացում ունենա պատմագիտական ամենատարբեր հրատարակությունների մասին: Այս իմաստով, թեմայի լուսաբանությանը մեծապես կարող են օգնել նաև ամենատարբեր ժողովածուները և վիճակագրական բնույթի գրքերը (մենք արդեն այս մասին մանրամասն խոսել ենք՝ Հ.Յ.): Հատկապես ուշադիր պետք է նայել մատենագիտական ուղեցույցները, ուր կարող եք գտնել Ձեր թեմային վերաբերող գրականությունը: Տեքստի վրա աշխատելիս, ուսանողը կարող է օգտագործել նաև հատընտիր ժողովածուներն ու ակադեմիական հրատարակությունները:

Գիտական նպատակներին ամենից ավելի համապատասխանում են ակադեմիական հրատարակությունները, որոնցում ամբողջական և ամփոփ ձևով ներկայացված են հիմնահարցերը, դրանք են՝ պատմութ-

յան ամփոփ դասընթացները, հանրագիտարանային և պատմագիտական բնույթի բառարանները և այլն: Իհարկե, այդ հրատարակություններում ոչ բոլոր հարցերի մասին կարելի է սպառնչ պատասխաններ գտնել, ուստի այստեղ պետք է դիմել թեմային նվիրված հատուկ ուսումնասիրությունների օգնությանը: Աշխատանքի ընթացքում կարող են առաջանալ նաև ամենատարբեր բնույթի հարցեր, որոնց պատասխանները Դուք կարող եք գտնել աղբյուրագիտական ժողովածուներում:

Դիպլոմային և կուրսային աշխատանք գրելիս, ասենք նույնն է, ինչ ատենախոսությունում, շատերի մոտ հարց է առաջանում, թե ինչ կարգով պետք է դասավորել հավաքած նյութը, կամ էլ՝ ինչպես սկսել հավաքել հարկավոր նյութը: Իմ փորձից ելնելով, մեր հետազոտողներին խորհուրդ կտայի հենց սկզբից, աչքի առաջ ունենալով արդեն ուրվագծված կառուցվածքը, թեմային անմիջականորեն վերաբերող նյութը գրառել գլուխների համար առանձնացված թղթապանակներում: Ինչ վերաբերում է արխիվային նյութերին, բնականաբար, անհնարին է Ձեզ հարկավոր նյութը միանգամից տեղավորել համապատասխան թղթապանակում, կամ էլ դրանք քարշ տալ արխիվ: Ուստի, արխիվային նյութը հավաքելիս, ուղղակի հենց տետրում, աչքի առաջ ունենալով աշխատանքի կառուցվածքը, վերևում կատարեք մի փոքր նշում, թե որ գլխին է վերաբերում նյութը՝ առաջին, երկրորդ, թե երրորդ գլխի համար և այլն: Հետագայում արդեն, Դուք բավականին հեշտությամբ կարող եք վերադասավորել այդ նյութերը՝ համապատասխան գլխի համար առանձնացված թղթապանակներում:

Հավաքելով անհրաժեշտ նյութերը, հետազոտողը սկսում է նրանց ուսումնասիրությունը: Անցնելով գործի, ուսանողները հաճախ չհամակարգված քաղվածքներ են կատարում: Այդպիսի գրառումներից օգտվելը բավականին դժվար է, քանի որ հետագայում լրացուցիչ աշխատանք կպահանջվի՝ այդ նյութերը տեղավորելու խնդրում: Ուստի, հավաքած նյութերի հետ աշխատելու լավագույն ձևերից մեկը **քարտային համակարգն է**: Դեռ ոչ մի ուսումնասիրող այս համակարգը չի շրջանցել: Այդպիսի համակարգի ստեղծումը Ձեր աշխատանքը բավականին կհեշ-



տացնի, հաղորդելով նրան հստակություն և կազմակերպվածություն: Բանն այն է, որ ուսումնասիրության ընթացքում կարող են բազում հարցեր ծագել: Ինչպես հիշել, թե որ էջի վրա է գտնվում հարկավոր նյութը, ինչպես էր վերնագրված ամիս առաջ նայած աշխատությունը կամ թե, որ հեղինակից են քաղված նյութերը: Քարտային համակարգը կօգնի Ձեզ դասակարգելու հավաքած նյութերը և ազատորեն բաշխելու դրանք՝ ըստ գլուխների: Ընդ որում, քարտը պետք է փոքր լինի սովորական Ա 4 ֆորմատի թղթից:

Այդ քարտերում ամենից առաջ պետք է գրվի կարդացած գրքի մատենագրությունը (հեղինակի ազգանունն ու ինիցիալները, գրքի վերնագիրը, հրատարակության տեղն ու տարեթիվը): Ամսագրային հոդվածների համար, վերնագրից բացի, գրվում է նաև ամսագրի անվանումը, համարը, տարեթիվը, հոդվածի էջը: Եթե գիրքը հեղինակային չէ, ապա գրվում է ժողովածուի հատորը և մյուս կարևոր մատենագիտական մանրամասները: Այդպիսով՝ Ձեզ մոտ արդեն կլինի կարդացված գրականության ցանկը:

Ձեր առջև կարող է ծագել նաև հետևյալ հարցը. ինչից սկսել աշխատանքը՝ հանձնարարված գրականությունից, թե սկզբնաղբյուրներից: Հարցին միանշանակ պատասխան տալ դժվար է: Ամեն ինչ կախված է Ձեր տեսական պատրաստվածությունից: Եթե հարցին խորապես ծանոթ չեք, ապա կարելի է սկսել այն գրքերից, որոնք առավել մոտ են Ձեր թեմային: Կարդալով ու համապատասխան նշումներ անելով, անցեք գլխավոր սկզբնաղբյուրներին, ապա կրկին վերադարձեք հանձնարարված գրականության մյուս գրքերին: Այս ամենը, իհարկե, պետք է կատարել արխիվային նյութը նայելուց առաջ: Յուրատեսակ գիտական այս պտույտը կարելի է շարունակել այնքան ժամանակ, քանի դեռ պատասխան չեք ստացել խնդրի առնչությամբ Ձեզ հուզող բոլոր հարցերին:

Յետազոտողներից ոմանք հաճախ նախընտրում են այլ տարբերակ՝ նախ ծանոթանում են սկզբնաղբյուրներին և հետո միայն անցնում են հանձնարարված գրականությանը: Երկու դեպքում էլ ընտրությունը Ձեզ է պատկանում. այնպես որ, խորհրդակցեք Ձեր գիտական ղեկա-

վարի հետ ընթերցման հաջորդականության հարցում և ապա որոշեք ինքններդ, քանի որ աշխատանքի կատարման այս փուլը ենթադրում է որոշակի անհատական մոտեցում: Մյուս կողմից, Դուք ստիպված եք լինելու հաշվի առնել նաև Ձեզանից անկախ հանգամանքներ. գրադարանում Ձեր նշած առաջին գիրքը գբաղված է, մյուսն ընդհանրապես չկա կամ էլ՝ կազմման մեջ է և այլն: Այնպես որ, աշխատանքի ընթացքում Դուք ստիպված եք լինելու որոշակի ձգգրտումներ մտցնել Ձեր աշխատանքների մեջ:

Իր բնույթով բավականին աշխատատար է պարբերական մամուլի հետ աշխատանքը: Այնտեղ կլինեն Ձեր թեմային վերաբերող բազմաթիվ նյութեր, որոնք կարող են անմիջապես Ձեզ հետաքրքրել: Սակայն շտապողականությունը կարող է Ձեզ վնասել: Ինչպես արդեն նշել ենք վերևում, մամուլի հրապարակումներն իրենց բնույթով բավականին տարբերվում են արխիվային վավերագրերից և գիտական գրականության նյութերից: Եթե վերջիններիս մոտ փաստական նյութերը քիչ թե շատ ունեն իրենց հիմնավորումները, ապա մամուլի նյութերին պետք է վերաբերվել որոշակի զգուշավորությամբ, քանի որ դրանք կարող են ձշտված չլինել կամ էլ՝ կասկած հարուցող տեղեկություններ են: Նույն զգուշավորությունը պետք է ցուցաբերել վիճակագրական տեղեկությունների հարցում: Ուստի, մամուլից տեղեկություններ բերելիս, պետք է դրանք համեմատել պաշտոնապես տպագրված նյութերի հետ, այլ խոսքով՝ մեկ անգամ ևս ձգգրտել դրանք:

Վերջում, ցանկանում ենք ներկայացնել գրադարաններում գրքի հետ վարվեցողության մի քանի պարտադիր կանոններ, քանի որ հաճախ ականատես ենք լինում գրքի հետ մեղմ ասած վատ վարմունքի, որը դատապարտելի երևույթ է ամեն առումով:

Այսպես ուրեմն՝

➤ Գիրքը չի կարելի ծալել, եթե նույնիսկ այն փափուկ կազմ ունի: Չփորձեք ուժ գործադրել, եթե նույնիսկ դժվարությամբ են թերթվում էջերը:

➤ Կարդալու ժամանակ արմունկները մի դրեք գրքի վրա:

➤ Աշխատեք գիրքը վայր չզցել և ընդհանրապես, թույլ մի տվեք ուրիշին՝ վատ վարվելու գրքի հետ:

➤ Գիրքը մի դրեք հատակին կամ պատուհանի գոգին. պետք է հիշել, որ գրքի համար վտանգավոր է ինչպես խոնավությունը, այնպես էլ արևի ճառագայթները:

➤ Գրքի վրա չի կարելի գրանցել Ձեր դատողություններն ու դիտողությունները. ո՛չ մի ընդգծում, գրանցում կամ նշում:

➤ Կարդալու ժամանակ չի կարելի հյութեր խմել, առավել ևս ուտել. չի կարելի նաև մատիտ սրել բացված գրքի վրա:

➤ Չնատիպ գրքերի հետ վարվեք բավականին զգույշ, հատկապես, երբ թերթում եք էջերը:

➤ Մի փորձեք սեփական ուժերով բացել սոսնձված կամ չառանձնացված էջերը. դիմեք գրադարանավարին. դրա համար կա հատուկ դանակ:

➤ Գիրքը ստանալիս՝ անմիջապես ստուգեք, թե ինչ վիճակում է. հակառակ դեպքում, թերություն հայտնաբերելիս, պատասխանատուն Դուք եք դառնում:

➤ Գիրքը վնասելու դեպքում Դուք պատասխանատվություն եք կրելու. դա կարող է լինել ինչպես դրամական, այնպես էլ վարչական. Ձեզ կարող են զրկել նաև գրադարանից օգտվելու հնարավորությունից:

## **ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇԱՐԱԴՐՈՒՄԸ**

Դուք արդեն համոզված եք, որ կարող եք սկսել աշխատանքի շարադրումը: Թերևս, հարկ կլինի մեկ անգամ ևս վերանայել և վերջնականապես հստակեցնել սկզբնական շրջանում կազմած աշխատանքի կառուցվածքը:

Չետազոտողը շարադրանքի ընթացքում մշտապես պետք է հիշի գիտական աշխատանքի մի կարևոր պայման. կատարված յուրաքանչյուր եզրակացություն, լինի դա նորություն, թե արդեն արտահայտված տեսակետ, պետք է անպայմանորեն հիմնվի աղբյուրների վրա: Այնպես

որ, գիտական գրավոր շարադրանքին տիրապետելը պահանջում է աշխատասիրություն և հետևողական աշխատանք: Գիտական աշխատանքները սովորաբար կազմված են լինում ներածությունից, մի քանի գլուխներից ու ենթագլուխներից (պարագրաֆներից), վերջաբանից կամ ամփոփումից, օգտագործած գրականության ցանկից:

**Ներածության մեջ** տրվում է հիմնահարցի արդիականությունը և կարևորությունը, խոսվում է աշխատանքի նպատակների և խնդիրների մասին, ներկայացվում է ժամանակագրական սահմանները և վերջապես, խնդրո առարկա հիմնահարցի ուսումնասիրության աստիճանը կամ ինչպես ընդունված է ասել՝ հարցի պատմագրությունը: Ներածականում հեղինակը նաև հիմնավորում է, թե խնդիրն վերաբերող որ հարցերն են դարձել ուսումնասիրության առարկա:

Այժմ փորձենք բաղդատել այդ ամենը:

**Աշխատանքի արդիականությունը և կարևորությունը:** Ներածականի այս մասում պետք է պատասխանել այն հարցին, թե ընտրված թեման պատմագիտական ինչ կարևորություն է ներկայացնում և թե ինչ աղերսներ ունի ներկայիս ժամանակաշրջանի հետ՝ մեզանում ծառայած խնդիրները պատմականորեն ըմբռնելու խնդրում:

**Աշխատանքի նպատակներն ու խնդիրները:** Ներածականի կարևոր խնդիրներից մեկը հետազոտության խնդիրների և նպատակների հստակ ներկայացումն է: Այստեղ նախանշվում են այն հիմնական նպատակներն ու խնդիրները, որը դրել է իր առջև հետազոտողը գիտական աշխատանքը ձեռնարկելիս, այլ խոսքով՝ հեղինակը հիմնավորում է իր ընտրած թեմայի կարևորությունը և թե ինչ նյութերի վրա է պատրաստվում այն ներկայացնել, որն է թեմայի նպատակը և ըստ այդմ՝ բնութագրում և ներկայացնում է այն հարցերի շրջանակը, որոնց պատասխանները պատրաստվում է քննարկել հեղինակն իր աշխատանքում:

**Ժամանակագրական շրջանակները:** Ինչպես արդեն նշել ենք վերևում, գիտական որևէ աշխատանք հնարավոր չէ պատկերացնել առանց ժամանակագրական սահմանների: Ուստի, այստեղ ուսանողը

հստակ պետք է ներկայացնի պատմական այն ժամանակահատվածը, որն ընդգրկում է իր ընտրած հիմնահարցը: Ավելին՝ հեղինակը պարտավոր է հիմնավորել այդ ժամանակահատվածի ընտրությունը:

**Ներածականի պատմագրական մասը:** Սովորաբար ներածականի այս մասը շարադրելիս հետազոտողները բավականին դժվարություններ են ունենում: Մինչդեռ, հենց այստեղ է դրսևորվում ուսանողի գիտական աշխատանքի գրելու չափանիշներից մեկը: Ուստի, աշխատանքի այս հատվածին պետք է լուրջ վերաբերվել: Մեր դիտարկումները բերում են նրան, որ այն հետազոտողները, ովքեր կարողանում են հաջողությամբ «մարսել» հանձնարարված գրականությունը, ապա, որպես կանոն, նրանց մոտ խնդիրներ չեն ծագում և ընդհակառակը, նրանք, ովքեր հակված են արտագրության, կանգնում են լուրջ դժվարությունների առջև: Այնուհանդերձ, աշխատանքի հեղինակը պարտավոր է տալ օգտագործած գրականության համառոտ վերլուծությունը: Իհարկե, խնդիրը չպետք է հասկանալ, թե բավական է ներկայացնել աղբյուրի պարզ բովանդակությունը, այլ պետք է աշխատել վերլուծել այն, առանձնացնելով հաղորդած նյութի կարևորությունը թեմայի լուսաբանության խնդրում:

Մյուս կողմից, պետք չէ առանձին-առանձին, մեկ առ մեկ ներկայացնել թեմային վերաբերող գրականությունը: Դրանք հարկավոր է տալ խմբավորված տեսքով, առանձնացնելով այն ուսումնասիրությունները, որոնցում հարցի մասին միևնույն մոտեցումներն են: Միայն այդպես կարելի է համեմատել և գտնել նրանցում եղած տարբերությունները, գուցե և հակասական մտքերը, որոնք կարելի է մանրամասն քննել հետագայում՝ աշխատանքի համապատասխան գլուխներում:

Գաղտնիք չէ, որ մեր առանձին հետազոտողների մոտ արմատացած է այն արատավոր պրակտիկան, երբ նրանք բավարարվում են իրենց թեմաներին վերաբերող մենագրությունների և հոդվածների պարզ համառոտագրությամբ, մինչդեռ հարկավոր է հրաժարվել նման շարադրանքից: Մեր մեթոդական խորհուրդն այսպիսին է. սկզբում պետք է անդրադառնալ այն աշխատություններին, որոնք անմիջակա-

նորեն են վերաբերում թեմային, ինչպես է հիմնախնդիրը լուսաբանված այդ ուսումնասիրություններում, որքանով են դրանք ամբողջական և խորը հետազոտված: Դրանից հետո միայն պետք է անդրադառնալ այն աշխատություններին, որոնցում հպանցիկ անդրադարձներ կան Ձեր թեմայի մասին: Անպայման պետք է նշել նաև, թե Ձեր կարծիքով, որ հարցերն են, որ դեռևս լուսաբանության կարոտ են: Այլ խոսքով, հարկավոր է առանձնացնել աղբյուրներն իրենց բնույթին համապատասխան, տալ դրանց ընդհանուր բնութագիրը և ներկայացնել առավել կարևոր, պատմագիտությանը քիչ հայտնի, ինչու չէ, նաև Ձեր կողմից առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրվող աղբյուրները:

Դուք արդեն նկատեցի՞նք, որ ներածականի պատմագրական մասը փոքր-ինչ ընդարձակ ստացվեց: Եվ դա մեր կողմից պատահական չի արված, քանի որ չի բացառվում, որ աղբյուրագիտական (պատմագրական) տեսությունը Ձեր աշխատանքում դառնա առանձին գլուխ: Պատմագիտական վերլուծության մեջ գլխավորը՝ տվյալ աղբյուրի յուրահատկության և նշանակության գնահատությունն է խնդրո առարկա հարցի լուսաբանության համար: Աղբյուրագիտական տեսությունը պետք է ավարտել ընդհանուր ամփոփումով՝ թե որքանով են այդ աղբյուրներն օգնում լուսաբանելու հիմնահարցը:

Չարցի պատմագրական մասը շարադրելիս հարկավոր է պահպանել **գիտական տարրական էթիկա**. այն է՝ պատշաճին ներկայացնել և գնահատել Ձեզանից առաջ հիմնահարցը քննության ենթարկած պատմաբանների ներդրումը հարցի ուսումնասիրության խնդրում: Չիմնահարցի գրականությունը ներկայացնելիս, Ձեզ մոտ անպայման հարցեր կառաջանան և նույնիսկ կարող է բանավիճելու ցանկություն առաջանա հայտնած որոշ տեսակետների հետ: Այդ ամենը բնական է և նույնիսկ ողջունելի, եթե դրանք, իհարկե, հիմնավորված են:

**Աշխատանքի շարադրանքը:** Գիտական աշխատանքի հիմնական բովանդակությունը ներկայացված է համապատասխան *գլուխներում*, որոնք ըստ ուսումնասիրության ծավալի, կարող են բաղկացած լինել երկու և ավելի գլուխներից: Աշխատանքի յուրաքանչյուր գլուխ պետք

է նվիրված լինի հիմնահարցի մեկ բաղադրիչ կողմի լուսաբանությանը, իսկ ենթագլուխները՝ այդ հիմնահարցի առանձին մասը կազմող հարցերի քննությանը: Ընդ որում, գլուխների բաժանման ժամանակ, հարկավոր է ուշադրություն դարձնել այն կարևոր հանգամանքին, որ դրանք միմյանց հետ պետք է ունենան տրամաբանական կապ ու հաջորդականություն, որի արդյունքում Դուք կունենաք հարցի բազմակողմանի և մանրամասն լուսաբանությունը:

Փաստական նյութի ճիշտ ընտրությունը, վերլուծությունն ու եզրահանգումներ կատարելը դեռ գործի կեսն է: Հարկավոր է, որ այդ եզրահանգումները դառնան ընթերցողի սեփականությունը, ինչը գիտական աշխատանքի շարադրման կարևոր պահանջներից մեկն է: Այս առումով, գիտական աշխատանքի որակը մեծապես կախված է հեղինակի շարադրած հաջորդական և տրամաբանորեն միմյանց հետ շղկապված մտքերից: Հետագոտողը պետք է տեղյակ լինի գիտական աշխատանքների շարադրությանը ներկայացվող մի քանի պարտադիր պահանջների՝

**Առաջին.** հեղինակի արտահայտած մտքերն ամենից առաջ պետք է հստակ լինեն: Ծատ ուսանողներ տարվելով գեղեցիկ խոսքերով ու արտահայտություններով և աշխատանքը դրանցով լցնելով, կարող են խեղաթյուրել դրանց բովանդակությունն ու իմաստը: Ուսանողներին երբեմն թվում է, թե մշուշոտ մտքերը, կամ ասենք, «մոդայիկ» և օտարամոլ բառերի օգտագործումը՝ առանց հասկանալու, իհարկե, դրանց իմաստը, «գիտականություն» կարող են հաղորդել իրենց աշխատանքին: Ավելորդ չենք համարում մեջբերել անցյալի նշանավոր մարդկանց կողմից ասված որոշ դատողություններ պատմագիտության և ընդհանրապես, վերջինիս վիճակված դերի մասին: Ֆրանսիացի պատմաբան Մարկ Բլոկը (1886-1944) ասել է. «Պատմությունը գիտություն է մարդու մասին ժամանակի մեջ: Պատմաբանի խնդիրն է ցույց տալ միայն, թե իրականում այդ ամենն ինչպես է տեղի ունենում, այլ ոչ թե հավակնել նրան, թե այն ինչ դաս կդառնա ապագայի բարօրության համար»: Նույն միտքը Ցիցերոնինը (ք.ծ.ա 106 - 43 թթ.) արտահայտել է

հետևյալ կերպ. «...պատմության մեջ ամեն ինչ պետք է հանգի ծշմարտության»:

**Երկրորդ.** շարադրանքում հստակ պետք է երևա հեղինակի անհատականությունը, այսինքն՝ տեքստի մեջ ուսանողը պետք է ունենա իր մտքերի կնիքը: Յուրաքանչյուր փաստական նյութ պետք է վերցնել և տեսնել ամբողջականության ու կապի մեջ: Առանձին վերցված փաստը ոչինչ է, եթե այն չի կապակցվում մյուս տեղեկությունների հետ և չի արտահայտում պատմական իրողությունը: Այլ խոսքով՝ չի կարելի հիմնվել առանձին վերցված փաստական նյութի վրա: Հին աշխարհի մտածողներից Թուկիդիդեսը (ք.ծ.ա 460-400 թթ.) գտնում էր. «Պատմությունը գրվում է ոչ թե լտողությանը բավականություն պատճառելու համար, այլ ծշմարտությունն ասելու համար... այն օգտակար է նրանց համար, ովքեր ցանկանում են պարզորոշ հասկանալ կատարվածը և դրանով՝ նաև ապագան, որը, մարդու բնույթից ելնելով, նույնը կլինի, կամ թե՛ դրանման»:

**Երրորդ.** հետազոտական աշխատանքը չպետք է վերածվի փաստերի կույտի. եթե փաստական նյութի հավաքման նախապատրաստական փուլում կարևորը շատ փաստերի կուտակումն է, ապա անմիջական շարադրման ընթացքում առաջին պլան է մղվում գլխավոր փաստարկների առանձնացումն ու շարադրումը, այլ խոսքով՝ հեղինակի կողմից նյութի մարտումը: Ասվածից, իհարկե, ամենևին էլ չի հետևում, թե պետք է գլխավորապես ուշադրություն դարձնել հայտնի փաստերի շարադրման վրա: Ընդհակառակը, առանձին մանրուքներ կարող են ձեռք բերել առաջնակարգ նշանակություն, եթե դրանք շաղկապվում են Ձեր թեմայի հետ: Կրկին անգամ ընդգծում ենք. արտահայտած յուրաքանչյուր կարծիք, տեսակետ կամ նոր միտք պետք է ամրապնդվի համապատասխան փաստական և աղբյուրագիտական նյութի հաստատումով:

**Չորրորդ.** պրակտիկայում հաճախ է պատահում, երբ հետազոտողներն իրենց աշխատանքը լցնում են նույն բովանդակությունն ունեցող փաստական նյութերով, որը սխալ է: Չի կարելի հրապուրվել նաև



դեկլարատիվ և հրապարակախոսական եզրակացություններով, եթե դրանք հիմնավորված չեն համապատասխան փաստերով և ընդհակառակը, չպետք է տարվել փաստասիրությամբ՝ չընդհանրացնելով և չհամաստավորելով դրանք: Կամ ասենք՝ հանդիպելով հակասական մտքերի ու փաստերի, սկսնակ հետազոտողը հաճախ հայտնվում է փակուղու առջև: Որպես կանոն, նա սկզբում փորձում է ընտրել այն նյութը, որն ավելի է համապատասխանում իր հայեցակետին: Մինչդեռ յուրաքանչյուր փաստ ունի իր հիմնավորումը և բացատրությունը, իսկ առանձին փաստերի «անբացատրելիությունը», թերևս, կարող է վկայել նաև նրա՝ դեռևս անբավարար ուսումնասիրության մասին:

Ուստի, Ձեր մոտ կարող է նույնիսկ ցանկություն առաջանալ խորանալ վերջինիս էության մեջ: Մյուս կողմից, սակայն, չի կարելի առանց ապացույցների հիմնավորել ցանկալին, առանց հաշվի առնելու հարցի բոլոր թեր և դեմ կողմերը: Ուստի, հարցը շարադրելիս, կարելի է բավարարվել երևույթն ընդհանրացնող և բնորոշող մեկ կամ երկու փաստական նյութի մեջբերումով: Անգլիացի պատմաբաններից մեկը՝ Գ. Բոկլը այսպիսի հետաքրքիր միտք ունի. «Իսկական գիտելիքը փաստերի հետ ծանոթությունը չէ, ինչը մարդուն դարձնում է միայն դոգմատիկ, այլ փաստերի օգտագործման ձևի մեջ է, ինչը նրան դարձնում է մտածող»:

**Յինգերորդ.** Եթե թվական տվյալները շատ են և միայն այդպես կարելի է ամբողջական դարձնել ասվածը, ապա դրանք պետք է ներկայացնել ամփոփիչ աղյուսակների միջոցով: Տեղին և հիմնավորված պետք է լինեն նաև քաղվածքները: Առանց համապատասխան քաղվածքների չի կայացել պատմագիտական և ոչ մի ուսումնասիրություն: **Քաղվածքները** պետք է բերել հիմնավորելու համար ասված միտքը, տեսակետը կամ նոր արտահայտած կարծիքը: Քաղվածքը կամ ցիտատը (զերմաներենից եկած Zitat բառն է, որը նշանակում է տեքստից առանց փոխելու, բառ առ բառ մեջբերված հատված) դա գրականությունից և աղբյուրներից հանված տեքստի բառացի ներկայացումն է:

Պատմագիտական աշխատության մեջ մեջբերումները արվում են հետևյալ դեպքերում.

- Աղբյուրների հաստատման ժամանակ, երբ հետազոտողը առավել նպատակահարմար է գտնում մեջբերել հեղինակի խոսքը՝ իմաստայնությունն ու արտահայտչականությունը չկորցնելու համար:

- Բանավիճելու հեղինակի հետ՝ վերջինիս կողմից հաղորդած ոչ ստույգ կան չհիմնավորված կարծիքի համար:

- Մեջբերում է հայտնած սեփական կարծիքը հաստատելու կամ պաշտպանելու համար:

Եթե ընթերցված գրքից քաղվածքներ եք բերում, ապա այն պետք է ներկայացնել առանց բառերի փոփոխման, նույնիսկ եթե այն չի համապատասխանում ներկայիս ընդունված շարահյուսական կանոններին, չմոռանաք դնել նաև չակերտները («»): Մեջբերման ժամանակ հետազոտողները հաճախ դիմում են նաև բազմակետի (...) օգնությանը. դա այն դեպքում, երբ հարկ չի լինում ամբողջովին ներկայացնելու հեղինակի խոսքը: Սակայն մյուս կողմից, նկատի պետք է ունենալ, որ բազմակետը չպետք է խեղաթյուրի հեղինակի խոսքի բուն իմաստը:

Երբեմն հետազոտողը ստիպված է լինում սեփական խոսքերով վերապատմել աղբյուրի տեքստը կամ հեղինակի հաղորդած միտքը. նման դեպքերում հարկ է, որ անպայման նշվի հեղինակի անունը: Մեջբերումը պետք է հանված լինի բնագրից. հակառակ դեպքում կա սխալվելու վտանգ, քանի որ երկրորդային աղբյուրում կարող է փոքր-ինչ այլ կերպ ներկայացված լինի մեջբերված կամ իրական հեղինակի խոսքերը: Միակ բացառությունն այստեղ այն է, որ աղբյուրի բնագրի անհասանելի կամ կորած լինելու պարագայում, թույլատրվում է երկրորդային աղբյուրի մատնանշումը: Նման դեպքերում ծանոթագրության մեջ կատարվում է համապատասխան նշում այն մասին, որ մեջբերումը կատարված է այս հեղինակից կամ աղբյուրից:

Քաղվածքները բերելիս պետք է պահպանել որոշակի չափավորություն. երկարաշունչ մեջբերումները կարող են միայն վնասել հետազոտությանը և զգել նրա արժեքը: Ուստի, քաղվածքները պետք է

խմբագրել ոչ թե բառերը փոխելով, այլ առանձնացնել այն մտքերը, որոնք բնորոշում են քաղվածքի էությունը: Միանգամայն անթույլատրելի է համատեքստից շեղումը կամ քաղվածքի իմաստային կամ թե ակամա խեղաթյուրումը: Գիտական աշխատանքների համար ընդունված է նաև մեջբերման անուղղակի ձևը, երբ սեփական բառերով ներկայացվում է հեղինակի մտքերի հիմնական բովանդակությունը, ապա տողատակում նշվում է հեղինակի գրքի մատենագրությունը: Մշտապես պետք է հիշել՝ չի թույլատրվում քաղվածքներ բերել առանց տողատակում հեղինակի մատենագիտական տվյալների: Ավարտելով գլխի շարադրումը, հարկ է այն ավարտել համառոտ ամփոփիչ եզրակացություններով:

Գիտական աշխատանքներն ավարտվում են **վերջաբանով** կամ **ամփոփման բաժնով**: Երբեմն, ներկայացվում է նաև *եզրակացությունների* տեսքով: Աշխատանքի այս բաժնում ամփոփվում են կատարված հետազոտության արդյունքները: Ուստի, այստեղ չպետք է ներկայացվեն փաստական նոր նյութեր, որոնց մասին արդեն խոսել եք աշխատանքի համապատասխան բաժիններում: Եզրակացությունների բաժնում հեղինակը կարող է միայն ամփոփման տեսքով ներկայացնել համապատասխան գլուխներում արված կարևոր ընդգծումները և գլխավոր մտքերը: Ցանկալի է նաև, որ այն խնդիրները, որոնք դրել էր իր առջև հեղինակը, վերջաբանում ներկայացվեն արդեն տեսական ամփոփումների տեսքով:

**Շարադրանքի ոճը:** Պատմագիտական ուսումնասիրությունների լեզուն պետք է լինի հստակ ու հասկանալի, միաժամանակ նաև խորիմաստ: Չետազոտողն իր մտքերով պետք է բացառի երկիմաստությունը՝ ինչպես ժողովուրդն է ասում՝ մեկ նալին է խփում, մեկ մեխին: Ուսանողները պետք է աշխատեն աստիճանաբար տիրապետել գիտական աշխատանքին հատուկ դարձվածքաբանությանը՝ տերմինոլոգիային, և չիրապուրվեն պերձախոս բառերով՝ իրենց մտքերը պարզ ու հստակ ներկայացնելու փոխարեն:

Չարկավոր է նաև հմտորեն ներկայացնել կամ շրջանցել իրենց ընտրած թեմայի ժամանակաշրջանին հատուկ խոսելաձևն ու գրե-

լաձևը, չմոռանալով, որ աշխատանք են գրում այսօրվա ընթերցողի համար: Հին աշխարհի նշանավոր պատմաբաններից Պոլիբիոսն ասում էր. «Պատմաբանի խնդիրը չպետք է լինի ընթերցողին զվարճացնելը մի շարք հոգեցունց տեղեկություններով, չպետք է լինի մտքերի փոխանցումը, որոնք ...արդեն ասվել են. պատմաբանը ոչ էլ պետք է մանրամասն ուսումնասիրի այն, ինչ որ թույլատրելի կամ անթույլատրելի է, ...այլ նրա խնդիրն է փոխանցել ողջ ժողովրդայնորեն այն, ինչ իրականում ասվել կամ տեղի է ունեցել, որքան էլ որ այն անընդունելի լինի» (ընդգծումը մերն է՝ Յ.Յ.):

Հետազոտողներին հաճախ մտահոգում է նաև այն հարցը, թե **քանի էջից** պետք է բաղկացած լինի գիտական աշխատանքը: Այստեղ դժվար է կոնկրետ պատասխան տալ, քանի որ կարելի է օրինակ, նույնիսկ քառասուն էջանոց կուրսային աշխատանք գրել, սակայն հարցն այդպես էլ չսպառել: Ուստի աշխատանքի ծավալը կախված է մեկ կարևոր չափանիշից՝ որքանով է հեղինակին հաջողվել լուսաբանել ու սպառել հարցը: Այնուհանդերձ, թեկնածուական ատենախոսությունների համար սահման է ընդունված մինչև 200 էջը, դիպլոմային աշխատանքների համար օպտիմալ է համարվում 50-70 էջը, կուրսային աշխատանքների համար՝ 25-30 էջը:

**Շարվածքը:** Կուրսային և դիպլոմային աշխատանքները կարելի է ներկայացնել ինչպես ձեռագիր, այնպես էլ համակարգչային շարվածքի տեսքով: Ձեռագիր տարբերակի դեպքում պարտադիր պայման է նրա ընթեռնելի լինելու հանգամանքը, եթե նկատի ունենանք, որ աշխատանքը գիտական դեկլարից բացի, կարդալու է նաև ընդդիմախոսը, ինչպես նաև ծանոթանալու են պետական քննական հանձնաժողովի անդամները: Ատենախոսությունների համար խնդիրը կանոնագրված է՝ ընդունվում են միայն համակարգչային շարվածքով տեքստերը:

Համակարգչային շարվածքով ներկայացնելիս պետք է ընտրել տառատեսակի 12 չափը, երկու քայլով (ինտերվալով), էջում 28-29 տող: Յուրաքանչյուր էջի լուսանցքների չափսերը պետք է լինեն՝ ձա-

խից 30 մմ, վերևից՝ 20 մմ, աջից՝ 10 մմ և ներքևից՝ 25 մմ: Ծարադրանքը գրվում է թղթի մի կողմի վրա. գլուխների վերնագրերը պետք է գրվեն մեծատառերով և սկսվեն նոր էջից: Բուլոր էջերը, ներառյալ լուսաբանող նկարները, աղյուսակները, հավելվածը և այլն, պետք է համարակալել հաջորդաբար: Ճիշտ է, համակարգիչներում տառատեսակների մեծ ընտրանի կա, սակայն, գիտական աշխատանքի համար առավել ընդունելի է «Arial Armenian» տառատեսակը:

## **ԱՆԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ**

Չաջողված աշխատանքի կարևոր չափանիշներից մեկն էլ նրա գեղեցիկ ձևավորումն է և բարեխղճորեն կազմած գիտական ապարատը: Ապագա պատմաբանը հենց սկզբից պետք է տիրապետի գիտական այդ, կարելի է ասել, շնորհին:

Ինչպես թեկնածուական ատենախոսությունը, այնպես էլ դիպլոմային կամ կուրսային աշխատանքը սկսվում է տիտղոսաթերթով, որը համարվում է առաջին էջ և չի համարակալվում: Այնտեղ նշվում է՝ ուսումնական հաստատության անվանումը, ֆակուլտետը, ամբիոնը, որտեղ կատարվել է աշխատանքը, թեմայի վերնագիրը, կատարողի ազգանունը և անունը, կուրսը, գիտական ղեկավարի ազգանունը, անվան և հայրանվան ինիցիալները, գիտական աստիճանը, գիտական կոչումը, ներքևում՝ պաշտպանության վայրը և թվականը: Որպեսզի առարկայական լինի ասվածը, բերում ենք տիտղոսաթերթի լրացման օրինակելի ձևը (էջ 53).

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

**ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ  
ԲԱԿԱԼԱՎՐԻ (ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ)  
ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

**ԹԵՄԱ՝ Սասունի 1894թ. ապստամբությունը**

**ԿԱՏԱՐՈՂ՝** (ազգանուն, անուն)

(պատմության ֆակուլտետի - ընդ կուրսի ուսանող /ուհի/)

**ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝** պատմական գիտությունների

դոկտոր, պրոֆ. կամ պ.գ.թ., դոցենտ

(ազգանուն, անվան և հայրանվան իմիցիալները)

Ե Ր Ե Վ Ա Ն - 2 0 ...

Աշխատանքի կառուցվածքը ներկայացվում է երկրորդ էջում և սովորաբար նույնպես չի համարակալվում և կրում է բովանդակություն վերնագիրը: Այստեղ պետք է տեղավորել աշխատանքի գլուխները և ենթագլուխները համապատասխան վերնագրերով և էջերով. օրինակ՝

**Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն\***

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ (վերնագիրը)..... 15

և այսպես շարունակ:

ՎԵՐՋԱԲԱՆ ..... 55

ՅԱՎԵԼՎԱԾ ..... 62

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... 70

---

\* էջերի համարակալումները պայմանական են:

**Գիտական ապարատը (հղումներ):** Այս բաժինը հետազոտողների ցավոտ կողմն է: Գիտական աշխատանքներում նկատվող թերությունների մեծ մասը վերաբերում են հենց այս հանձնարարականին: Ամփոփությունն այստեղ լիովին պետք է բացառել:

Գիտական աշխատանքն անպայման ենթադրում է հղումներ՝ այսինքն՝ քաղվածքներ ինչպես արխիվային վավերագրերից, այնպես էլ կարդացած գրականությունից: Այս իմաստով, կա պարտադիր հանձնարարական՝ յուրաքանչյուր քաղվածք, վիճակագրական տեղեկություն պետք է իր մատենագրությունը ստանա աշխատանքում: Թվանիշը պետք է դնել հղումը ավարտելուն պես, լինի դա ուղղակի, թե անուղղակի մեջբերում:

Ներկայումս գիտական աշխատանքների համար ընդունելի են հղումների մի քանի տեսակներ՝

1. Այսպես կոչված դասական ձև, երբ հղումները տրվում են յուրաքանչյուր էջի վերջում, համարակալելով դրանք՝ 1,2, 3, 4... և այլն:

2. Հղումները տրվում են համապատասխան գլխի վերջում՝ առանձին էջով: Որպես կանոն, դրանք տրվում են աճող համարակալումով՝

1,2,3,4...22,...68 և այլն:

3. Բոլոր հղումները տրվում են աշխատանքի վերջում, կրկին աճող համարակալումով:

Հղումներում տրվում է աղբյուրի ողջ մատենագրությունը՝ համապատասխան էջի նշումով: Այսպես օրինակ,

*Հովհաննիսյան Ա.Գ., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք 1, Երևան, 1957, էջ 176-177:*

Եթե մենագրությունն ունի երկու հեղինակ, ապա երկուսի անունն էլ գրվում է՝ այսպես՝ *Բարխուդարյան Վ. Բ., Ոսկանյան Վ.Կ., Հայ-ռուսական պատմական կապերը և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, Երևան, 1978, էջ 68-69:*

Եթե աղբյուրը կրկնվում է հաջորդ էջերում, ապա կարիք չկա ամբողջությամբ կրկնել գրքի վերնագիրը: Ուղղակի պետք է գրել նույն հե-



ղինակի ազգանունը և ինիցիալները, ապա՝ «*Նշված աշխատությունը, կրճատ՝ Նշվ. աշխ.,*», էջ 70-71 և այսպես շարունակ:

Եթե հեղինակը նույնն է, սակայն նյութը քաղված է նրա մեկ այլ աշխատությունից, ապա գրքի մատենագրությունը ներկայացվում է ամբողջությամբ: Օրինակ՝ *Հովհաննիսյան Ա. Գ., Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք 2, Երևան, 1959, էջ 152-153:*

Եթե նույն հեղինակից բերվող հղումները նույն գրքից շարունակվում են, ապա պետք է գրել՝ *նույն տեղում*: Վերջերս գիտական էթիկա է մտել նաև *անդ* ձևը: Այսպես, օրինակ, *Հովհաննիսյան Ա. Գ., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք 1, Երևան, 1957, էջ 176-177:*

*Նույն տեղում, կամ անդ, էջ 178:*

Սակայն եթե հեղինակը կամ աղբյուրը հաջորդ քաղվածքում փոխվում է, ապա պետք է գրել հեղինակի ազգանունը, ինիցիալները, հետո՝ *Նշված աշխ.*: Այսպես, օրինակ, *Հովհաննիսյան Ա. Գ., Նշված աշխ., էջ 153*: Սակայն եթե կրկին վերադառնում եք նախորդ գրքին, ապա պետք է գրել՝ *Հովհաննիսյան Ա. Գ., Դրվագներ հայ ազատագրական... էջ 179*: Կամ՝ *Բարխուդարյան Վ. Բ., Ոսկանյան Վ. Կ., Հայ-ռուսական պատմական կապերը... էջ 89*:

*Տես*՝ գրվում է միայն այն դեպքերում, երբ Դուք Ձեր բառերով՝ այսինքն՝ անուղղակի ձևով եք ներկայացնում հեղինակի միտքը կամ հենվում եք վերջինիս արտահայտած տեսակետին:

Նույն ձևով պետք է վարվել արխիվային նյութը մեջբերելիս. եթե արխիվի անունը, ֆոնդը, ցուցակը, գործը, թերթի համարը չի փոխվում, ապա գրում եք՝ *նույն տեղում* կամ *անդ*: Օրինակ՝ *ՀԱԱ (Հայաստանի ազգային արխիվ), ֆ.112, ց.3, գ.128, թ.28*: *Նույն տեղում, թ. 29*: Իսկ երբ փոխվում է դրանցից որևէ մեկը, պետք է գրել նոր ֆոնդի, ցուցակի, գործի համարը և այլն (*նույն տեղում, սակայն փոխված ֆոնդի, ցուցակի, գործի, թերթի համարը: Օրինակ՝ ֆ.113, ց.4,...և այլն*):

Մեկ մանրամասն ևս. եթե գիտական աշխատանքի հեղինակը քաղվածքի մեջ ուզում է որոշակիություն և պարզություն մտցնել, ապա

կարող է հենց քաղվածքում, փակագծում գրել՝ (նկատի ունի Պասկևիչին՝ Յ.Յ ) և այլն: Կամ՝ որպեսզի փոքր-ինչ ընդարձակ քաղվածքները չհոգնեցնեն ընթերցողին, հնարամիտ հետազոտողը դրանք «կտրում» է՝ , - գրում է նա, - ասվում էր զեկուցագրում, - հաստատում է հեղինակը, - և այլ ընդունված արտահայտություններով:

**Օգտագործած աղբյուրների և գրականության ցանկի կազմումը:** Թեմային վերաբերող աղբյուրների և գրականության ցանկի կամ ինչպես ընդունված է ասել բիբլիոգրաֆիան գիտական աշխատանքի կարևոր մասն է կազմում և տեղադրվում է աշխատանքի վերջում: Նրա կազմումը բավականին նուրբ գործ է և խոսում է հեղինակի գիտական բարեխղճության մասին: Օգտագործած աղբյուրները ցանկի մեջ ներառվում են որոշակի հերթականությամբ: Մատենագիտության կազմումը իրականացվում է հետևյալ կերպ. սկզբում այբբենական կարգով դասավորվում են սկզբնաղբյուրները, ապա նույն սկզբունքով օգտագործված գրականությունը: Ստորև ներկայացնում ենք ընդունված ձևը.

**Սկզբնաղբյուրներ** (հերթականությունն այսպիսին է).

➤ **Արխիվային նյութեր**

Պետք է գրել արխիվի լրիվ անունը, օրինակ՝ Յայաստանի ազգային արխիվ: Այնուհետև փակագծերում՝ համապատասխան հապավումը՝ ՀԱԱ: Ապա՝ համապատասխան ֆոնդի, ցուցակի, գործի, թերթի համարը, որից Դուք օգտվել եք՝ ՀԱԱ, ֆ.112, ց.2, գ. 124, թ.24 և այլն :

➤ **Մամուլ**

Այստեղ նշվում են ամսագրերի և թերթերի անունները, համապատասխան թվականը, համարը, օրը: Օրինակ, «Մշակ», 1885թ. N251, 24-ը նոյեմբերի և այլն:

➤ **Փաստաթղթերի ժողովածուներ**

Նրա մեջ մտնում են փաստաթղթերի և նյութերի ժողովածուները, վիճակագրական տեղեկատուները: Չպետք է մոռանալ, որ բոլոր այս գրքերը պետք է ներկայացվեն այբբենական կարգով: Օրինակ՝ «Յայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քա-

ղաքականության փաստաթղթերում (1828-1923)», Երևան, 1972, էջ 130-149 և այլն:

➤ **Գրականություն**

Աղբյուրների և գրականության ցանկի հաջորդ բաժինը վերնագրվում է գրականություն: Այստեղ տեղադրվում է օգտագործած ողջ գրականությունը՝ **այբբենական կարգով**:

Չի թույլատրվում օգտագործած գրականությունը ներկայացնել ըստ հայեցողության, բաժանելով այն գլխավորի և երկրորդականի: Նշվում է հեղինակի ազգանունը և ինիցիալները, մենագրության վերնագիրը, հրատարակության տեղը, առանձին դեպքերում գրվում է նաև աշխատության էջերի քանակը: Ամսագրերից և թերթերից քաղած հոդվածները ևս պետք է տեղավորել այստեղ, ընդհանուր ցանկի մեջ և նույն կարգով:

Գրականության ցանկում պետք է ընդգրկել միայն այն հեղինակների աշխատությունները, որոնցից Դուք հղումներ եք կատարել: Եթե օգտագործել եք հայերեն և օտար լեզուներով գրականություն, ապա պետք է դրանք բաժանել առանձին բաժինների: Սկզբում պետք է ներկայացնել հայերենով գրականությունը, ապա ռուսերեն և վերջում մեկ բաժնով՝ անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն և այլ լեզուներով գրականությունը հերթականությամբ և կրկին այբբենական կարգով:

Թեպետ ոչ ոք չի պարտադրում ուսանողին ներկայացնելու համակարգչով հավաքված աշխատանք, սակայն ընթեռնելի լինելու հանգամանքը պարտադիր է: Նույն ձևով նաև ուսանողին չի պարտադրվում աշխատանքը հատուկ կազմով ներկայացնելը, սակայն պարտադիր է այն թղթապանակով ներկայացումը՝ որպեսզի էջերը չխառնվեն: Ամեն դեպքում, դա Ձեր մտահոգության խնդիրն է:

Ձեռագրով կամ թե համակարգչային շարվածքով ներկայացնելուց առաջ հետազոտողը պարտավոր է մեկ անգամ ևս ստուգել հղումների ճշտությունը և ուղղել տառապախալները, քանի որ աշխատանքը պաշտպանության ներկայացնելուց հետո ուսանողին է մնում նկատված տեխնիկական և գիտական բնույթի թերությունների պատասխանատվությունը:

➤ **Հավելված:** Գիտական աշխատանքների հավելվածում տրվում են աղյուսակները, թեմային անմիջականորեն վերաբերող փաստաթղթերի ամբողջական տեքստերը և այլն:

Այս հանձնարարականների բարեխիղճ կատարումը մեծապես կբարձրացնի Ձեր գիտական աշխատանքի արժեքը:

## ԳԻՏԱԿԱՆ ԱՆԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

**Ատենախոսության, դիպլոմային և կուրսային աշխատանքի պաշտպանությունը:** Ատենախոսության, ինչպես նաև դիպլոմային և կուրսային աշխատանքի նախնական տարբերակը հեղինակը նախ պետք է հանձնի իր գիտական ղեկավարին, ապա նրա կողմից արված դիտողությունները շտկելուց հետո վերջնական տեսքով ներկայացնի համապատասխան ամբիոն կամ բաժին: Ատենախոսությունների պարագայում կարգը փոքր-ինչ այլ է, քանի որ ղեկավարը և հեղինակը միասին են որոշում ամբիոն հանձնելու ժամանակը:

Ինչ վերաբերում է դիպլոմային և կուրսային աշխատանքներին, ապա այն **պետք է ամբիոն ներկայացնել պաշտպանության նախատեսված ժամկետից ոչ ուշ, քան մեկ շաբաթ առաջ:** Աշխատանքի հետ կցվում է նաև գիտական ղեկավարի կարծիքը՝ աշխատանքը պաշտպանության երաշխավորելու մասին: Առանց գիտական ղեկավարի երաշխավորության, աշխատանքը պաշտպանության չի ներկայացվում և չի ընդունվում: Եթե գիտական ղեկավարի և կատարողի միջև կան սկզբունքային տարաձայնություններ, ապա աշխատանքը կարող է ներկայացվել պաշտպանության՝ միմիայն ամբիոնի վարիչի համապատասխան երաշխավորությամբ, թեպետ նման դեպքերը հազվադեպ են պատահում:

Դիպլոմային յուրաքանչյուր աշխատանքի համար ամբիոնը նախօրոք, ամբիոնի անդամներից մեկին հաստատում է որպես **պաշտոնական ընդդիմախոս:**

Դիպլոմային և կուրսային աշխատանքների **հրապարակային պաշտպանությունն** ընթանում է կանոնակարգված ձևով. կուրսային աշխատանքների պաշտպանությունը կատարվում է ամբիոնում՝ ամբիոնի անդամների ներկայությամբ, իսկ դիպլոմային աշխատանքների-նը՝ պետական քննական հանձնաժողովի ներկայությամբ:

Պետական քննական հանձնաժողովի նախագահի կողմից ուսանողի անուն ազգանունը և թեմայի վերնագիրը ներկայացնելուց հետո, աշխատանքի հեղինակը հանդես է գալիս կարծ **ելույթով՝ 10-12 րոպեի սահմաններում**, որտեղ հիմնավորում է թեմայի ընտրությունը, համառոտ ներկայացնում է, թե ինչ աղբյուրներից է օգտվել աշխատանքը շարադրելիս, անդրադառնում է հարցի պատմագրությանը, այնուհետև ներկայացնում է աշխատանքի բովանդակությունը և հետազոտության արդյունքում կատարած հիմնական եզրակացությունները: Ելույթը պետք է պատրաստել նախօրոք. գերադասելի է ձեռքի տակ ունենալ տեքստ՝ մեկ էջի սահմաններում: Ցանկալի է նաև, որ այն նախօրոք համաձայնեցվի գիտական ղեկավարի հետ:

Ելույթից հետո հանձնաժողովի նախագահը, անդամները և ներկաները իրավունք ունեն նրան հարցեր տալ ինչպես անմիջական թեմային վերաբերող, այնպես էլ հիմնահարցին մոտ թեմաներից: Ուսանողը պարտավոր է պատասխանել բոլոր առաջադրված հարցերին: Ընդ որում, պատասխանները պետք է լինի հստակ, հակիրճ և ըստ էության:

Այնուհետև ձայնը տրվում է **պաշտոնական ընդդիմախոսին**, որն ընթերցում կամ բանավոր կերպով արտահայտում է իր գրած կարծիքը ներկայացված աշխատանքի վերաբերյալ և վերջում ներկայացնում է առաջարկվող գնահատականը: Ընդդիմախոսը իր ելույթի առաջին բաժնում ներկայացնում է հեղինակի կողմից հիմնահարցի ճիշտ ընտրությունը և նրա արդիականությունը, կառուցվածքը, աշխատանքի աղբյուրագիտական հենքը, հարցի պատմագիտական վերլուծությունն ու լուսաբանությունը և այլ հարցեր: Այլ խոսքով, ընդդիմախոսը ելույթի այս բաժնում ներկայացնում է աշխատանքի մասին իր ընդհանուր գնահատականները: Ելույթի հաջորդ բաժնում ընդդիմախոսը հատուկ անդ-

րադարձ է կատարում աշխատանքում նկատված թերություններին և բացթողումներին: Սովորաբար այն անվանում են դիտողությունների բաժին:

Կարծիքի վերջում ընդդիմախոսը հատուկ նշում է դիպլոմային աշխատանքներին ներկայացվող պահանջների հետ վերջինիս համապատասխանությունը, այնուհետև **ձևակերպում է աշխատանքի ընդհանուր գնահատականը**: Սովորաբար ընդդիմախոսների կողմից առաջարկվում են գնահատման երկու չափանիշներ՝ «բարձր գնահատական» և «դրական գնահատական»: Իհարկե, չի բացառվում նաև, որ ընդդիմախոսը անբավարար գնահատի ներկայացված աշխատանքը: Նման գնահատականի դեպքում ընդդիմախոսը պետք է անպայման հիմնավորի իր եզրակացությունը. այն է՝ որ վերնագիրն ընդհանուր է և իրենից կոնկրետություն չի ներկայացնում, նախաբանը առանձնացված չէ կամ բացակայում է, հիմնահարցերը ծիշտ չեն ձևակերպված, բացակայում է եզրակացությունների բաժինը, բովանդակությունը ցրված է ներկայացված, առկա են քերականական ու լեզվական բազմաթիվ սխալներ, բացակայում է ծանոթագրությունը և մատենագիտությունը: Սակայն, նորից ենք ընդգծում, որ նման դեպքերը հազվադեպ են պատահում դիպլոմային աշխատանքների պաշտպանական պրակտիկայում և որպես կանոն, այդպիսիները ամբիոնի կողմից պաշտպանության չեն երաշխավորվում:

Իսկ ահա թեկնածուական ատենախոսության պարագայում նման դեպքերը բացառություն չեն և ատենախոսության հեղինակին է վերապահված վերջնական որոշում կայացնելու իրավունքը՝ ներկայացնել աշխատանքը պաշտպանության, թե ոչ: Ի դեպ, նույնպիսի որոշում կարող է կայացնել նաև դիպլոմային աշխատանքի հեղինակը: Ընդ որում, թե՛ ատենախոսության և թե՛ դիպլոմային աշխատանքի պարագայում, հեղինակը նախօրոք կարող է ծանոթանալ ընդդիմախոսի կարծիքի հետ և պաշտպանության ժամանակ հանդես գալ պատասխան, ինչու չէ՞ նաև պաշտպանական ելույթով: Հանձնաժողովի նախագահն ընդդիմախոսի ելույթից հետո պարտավոր է ձայն տալ աշխատանքի հեղինա-

կին՝ ընդդիմախոսին պատասխանելու և նկատված դիտողությունների վերաբերյալ իր բացատրությունները ներկայացնելու համար:

Աշխատանքները պաշտպանելուց հետո, կուրսային աշխատանքների դեպքում ամբիոնը, դիպլոմային աշխատանքների պարագայում պետական քննական հանձնաժողովն անցնում է դռնփակ նիստի և գիտական ղեկավարի և ընդդիմախոսի ներկայությամբ կայացնում է աշխատանքի վերջնական գնահատականը: Ընդ որում, այստեղ հաշվի է առնվում ինչպես ընդդիմախոսի հայտնած կարծիքը և պետական քննական հանձնաժողովի անդամների կողմից տրված հարցերին ուսանողի պատասխանները, այնպես էլ իր դիրքորոշմանը մնալու հաստատականությունը և գիտական վեժ տանելու և սխալներն ընդունելու ուսանողի ունակությունները:

Չաջողված դիպլոմային աշխատանքներն ամբիոնը և պետական քննական հանձնաժողովը իրավասու են երաշխավորելու տպագրության՝ համապատասխան դիտողությունները հաշվի առնելու և խմբագրական բնույթի որոշ աշխատանքներ կատարելուց հետո: Առանձին բացառություններով, գրեթե նույն ընթացակարգն ունի թեկնածուական ատենախոսությունների պաշտպանությունը:

Այսքանը, սիրելի ասպիրանտ և ուսանող: Կարծում ենք, մեզ որոշ չափով հաջողվեց ներկայացնել գիտական աշխատանքների պաշտպանությանը նախորդող փուլերը և բուն պաշտպանության ընթացքը: Մեր խոսքն ավարտելուց առաջ, կրկին անգամ ուզում ենք ընդգծել, որ գիտական աշխատանքը ենթադրում է ազատ ստեղծագործականություն և մտքերի անկաշկանդ շարադրանք, ինչը և ցանկանում ենք Ձեզ՝

***Բարեհաջող պաշտպանություն:***

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ .....	3
Թեմայի ընտրությունը .....	5
Գիտական աշխատանքների թեմաների հաստատումը .....	9
Հանձնարարված գրականության և նյութերի հավաքումը .....	12
Աշխատանքի կառուցվածքի կազմումը .....	31
Աղբյուրների ու գրականության մշակումը .....	33
Գիտական աշխատանքի շարադրումը .....	42
Աշխատանքի ձևավորումը.....	52
Գիտական աշխատանքների պաշտպանությունը .....	58



ՀԱՅԿԱԶ ԺՈՐԱՅԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**ԻՆՉՊԵՍ ԳՐԵԼ  
ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԻՑ**  
Մեթոդական հանձնարարականներ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի  
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի  
Հրատ. խմբագրումը՝ Լ. Հովհաննիսյանի

Չափսը՝ 60x84 <sup>1</sup>/<sub>16</sub>: Տպ. մամուլ 4:  
Տպաքանակը՝ 100 օրինակ:

**ԵՊՀ հրատարակչություն**  

---

ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1

